2804

Printed in Turkey
Դ-37 1714-47
328 3-51 1198

# ՊԱՐՏԷԶ ՀՈԳԵՒՈՐ.

Յորում պարունակին պէս պէս բանք հոգեշահ աղօթից, և խնդրուածք հաշտեցուցիչք ընդ յաղօթամատոյց գրոց երանելի վարդապետաց. Նաև պատմութիւն վարուց սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին։

Ի Պատրիարգութեան կոստանդնուպօլսոյ Տեառն Ստեփաննոսի ամենապատիւ և վեհափառ Ս. Արքեպիսկոպոսի։

ՏՊԵԱԼ.

1838 ՅՕՐԹԱԳԻՒՂ. ՌՄՁԷ

Ի Տպարանի Երիցորդւոյ Պօղոսի Արապեան ապուչեխցւոյ։

243



Printed in Turk

Աղօթք առաւօտեան իւրաքանչիւր աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն։

Հայր մեր որ յերկինս · սուրբ եղիցի անուն քո · եկեսցէ արքայութիւն քո · եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի · զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր · թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց · և մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն · այլ փրկեա զմեզ ՚ի չարէ · զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

---

Տէր՝ եթէ շրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։

Տէր՝ եթէ զշրթունս իմ բա-
նաս, բերան իմ երգեսցէ զօրհ-
նութիւնս քո։

Օրհնեալ համագոյ և միասնա-
կան անբաժանելի սուրբ Երրորդու-
թիւն՝ Հայր և Որդի և Հոգի սուրբ․
այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից, ամէն։

Տէր՝ զի բազում եղեն նեղիչք
իմ, և բազումք յարեան 'ի
վերայ իմ։

Բազումք ասէին զանձնէ իմմէ,
թէ չիք փրկութի̄ սորա առ ա̄ծ իւր։

Դու Տէր օգնական իմ
ես, փառք իմ և բարձրացուցիչ
գլխոյ իմոյ։

Ձայնիւ իմով ես առ տ̄ր կար-
դացի, և լուաւ ինձ 'ի լեռնէ սրբոյ
իւրմէ։

Ես ննջեցի և'ի քուն եղէ, զար-

 թեայ

թեայ և տէր ընդունելի իմ է ։
Ո՛չ երկեայց ես 'ի բիւրաւոր
զօրաց նց, որք շուրջանակի պատ-
եալ պաշարեալ պահէին զիս ։
Արի՛ տր և փրկեա՛ զիս ած իմ,
զի դու հարեր զամենեսեան որք
էին ընդ իս թշնամութեամբ 'ի տա-
րապարտուց, և զատամունս մեղա-
ւորաց փշրեցես ։
Տեառն է փրկութի, 'ի վր ժո-
ղովրդեան քո օրհնութի քո ։
Տէր ած փրկութն իմոյ, 'ի տուէ
կարդացի և գիշերի առաջի քո ։
Մտցեն աղօթք իմ առաջի քո
տէր, խոնարհեցի ունկն քո 'ի
խնդրուածս իմ ։
Զի լցաւ չարչարանօք անձն
իմ, և կեանք իմ 'ի դժոխս մերձե-
ցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ
որք իջանեն 'ի գուբ ։
Եղէ ես որպէս մարդ առանց

օգնական, և ՚ի մեռեալս ազատ։

Որպէս զվիրաւորս, որք ննջեն ՚ի գերեզմանս։

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի ձեռանէ քումմէ մերժեցան։

Եդին զիս ՚ի գբի ներքնումն, ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու։

Յիս հաստատեցաւ սրտմտութ̃ի քո, զա̃մ զբօսանս քո ածեր ՚ի վերայ իմ։

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ, և եդին զիս նշաւակ իւրեանց։

Մատնեցայ և ոչ ելանէի, աչք իմ տկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ տէր զօրհանապազ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Մի թէ մեռելոց առնիցես զս-քանչելիս քո, կամ բժիշկք յարուցեալ՝ խոստովան առնիցին առ քեզ։

Մի թէ պատմեսցէ ոք երբէք ՚ի

'ի գերեզմանի զողորմութիւնս քո, կամ զճշմարտութիւնս քո 'ի կորստեան։

Միթէ ծանիցեն 'ի խաւարի սքանչելիս քո, կամ արդարութիւն քո յերկրի մոռացեալ։

Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։

Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն։

Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի մանկութենէ իմմէ, 'ի բարձրութենէ խոնարհեցայ և ափշեցայ։

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք քո խռովեցուցին զիս։

Շրջեցան զինև որպէս ջուր, զօր ամենայն պաշարեցին զիս 'ի միասին.

Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ և զծանօթս իմ՝ վասն

թշուառութեան իմոյ ։

Օրհնեա՛ անձն իմ զտ̃ր, և ա̃մ ոսկերք իմ զանուն ս̃բ նորա ։

Օրհնեա՛ անձն իմ զտ̃ր, և մի՛ մոռանար զա̃մ տուրս նորա ։

Որ քաւէ զմեղս քո, բժշկէ զա̃մ հիւանդութիւնս քո ։

Որ փրկէ յապականութենէ զկեանս քո, պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ ։

Որ լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո, նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո ։

Առնէ ողորմութիւնս տէր, և իրաւունս ա̃մ զրկելոց ։

Ցոյց տէր զճանապարհս իւր Մովսէսի, և որդւոցն Իսրայէլի զկամս իւր ։

Գթած ողորմած է տէր, երկայնամիտ և բազումողորմ ։

Ոչ իսպառ բարկանայ մեզ տ̃ր,



և

և ո՛չ յաւիտեան պահէ ոխս։

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր, և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։

Ըստ որպէս բարձր են երկինք յերկրէ, այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց։

Որչափ հեռի են արևելք յարևմտից, այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւնս մեր։

Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւղածս իւր։

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, և յիշեաց թէ հող եմք։

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկի։

Շնչէ ՚ի նմա հողմ և ո՛չ է, և ո՛չ ևս երևի տեղի նորա։

Բայց ողորմութի տն մնայ յաւիտեանս յաւիտենից ՚ի վր երկիւղածաց իւրոց, և արդարութի նր յորդւոց մինչև յորդիս.

Որք պահեն զուխտս նր, յիշեն զպատուիրանս նր և առնեն զնա:

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր, արքայութիւն նորա ամենեցուն տիրէ:

Օրհնեցէք զտր ամ հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ որք առնէք զբան նորա՝ ՚ի լսել ձայնի պատգամաց նորա:

Օրհնեցէք զտէր ամ զօրութիւնք նորա, պաշտօնեայք և արարօղք կամաց նորա.

Օրհնեցէք զտէր ամ գործք նորա, զի ընդ ամ տեղիս է տէրութիւն նր. օրհնեա՛ անձն իմ զտր:

Տէր լո՛ւր աղօթից իմոց, ո՛ւնկն դիր խնդրուածաց իմոց ճշմար-



տու

տութեամբ քով,

Լուր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում, զի ոչ արդարանայ առաջի քո ա̃մ կենդանի,

Հալածեաց թշնամին զանձն իմ, խոնարհ արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս ՚ի խաւարի որպ̃ մեռեալ յաւիտենից:

Ձանձրացաւ յիս հոգի իմ, և սիրտ իմ խռովեցաւ յիս:

Յիշեցի զաւուրսն զառաջինս, խորհեցայ յա̃մ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ:

Անձն իմ որպ̃ երկիր ծարաւի է առ քեզ, վաղվաղակի լուր ինձ Տ̃ր զի նուաղեցաւ յինէն հոգի իմ:

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, նմանիցիմ այնոցիկ ոյք իջանեն ՚ի դուբ:

Լսելի՛ արա ինձ առաւօտու
զողորմութիւնս քո, զի ես ՚ի քեզ
տէր յուսացայ։
Ցո՛յց ինձ ճանապարհ յոր և
գնացից, զի առ քեզ տէր համ-
բարձի զանձն իմ։
Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց
տ̅ր, զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի
դու ես աստուած իմ։
Հոգի քո բարի առաջնորդեսցէ
ինձ ՚ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տ̅ր կեցուս-
ցես զիս արդարութ̅բ քով, հանցես
՚ի նեղութենէ զանձն իմ։
Ողորմութ̅բ քով սատակեսցես
զթշնամիս իմ, և կորուսցես զա̅մ
նեղիչս անձին իմ̅յ, զի ես ծառայ
քո եմ։

Աղօթք առաւօտեան:

Փառք քեզ Ա͞Ծ արթուն բը-
նութի͞ւն, որ ոչ երբէք ննջես
պահապանդ իսրայելի: Որ յան-
մահ պաշտօնէից քոց՝ խմբական
ձայնիւ անդադար օրհնաբանիս:
Որ և զիս զհողեղէն ծառայս քո
յանձնեցեր ՚ի պահպանութ͞ի նց͞.
և կարգեցեր քնածու բնութ͞են՝
զարթուն ծառայդ ՚ի խնամակա-
լութիւն: Որս և շնորհեցեր
թմրեցելոյս ձայնատու և զարթու-
ցիչ իբրև զգիշերային խօսնակս,
կանխել ՚ի փառաբանութ͞ի անուան
քո սրբոյ, զի և ՚ի հողեղինացս հա-
ճեցար առնուլ զօրհնութիւն:

Գոհանամ զքէն անմատչելի լոյս
ս͞բ երրորդութ͞ի, որ զիս պահպանե-
ցեր ՚ի խաւարագնաց դիւաց՝ ՚ի
թշնամեաց փորձութ͞ենս իմոյ. և ընդ-

 ար

արթուն բնութիւն հրեշտակացդ՝
օրհնաբանակից քեզ արարեր,
Ո՛ ինչ տաց քեզ արխտուր և փո-
խանակ բարերարութեանդ տէր իմ,
կեանք իմ, լոյս իմ, և աղբիւր ա̃մ
բարեաց, եթէ ոչ զկեանս իմ՝ զոր
ետուր և շնորհեցեր ինձ ՚ի գիշե-
րիս յայսմիկ, քեզ նուիրեցից ՚ի
մշտնջենաւոր և յանդադար փա-
ռաբանութիւն․ Թէպէտ չեմ բա-
ւական ըստ արժանեաց փառաց
քոց օրհնել զքեզ։
Արդ՝ ո̃ր հրեշտակաց քոց տաս
նոր ՚ի նորոյ զզանազան կերպ զքեզ
օրհնելոյ՝ և երեքսրբենիւ փառա-
բանելոյ, տուր և ինձ աղաչեմ ըզ
քեզ՝ արթնութի̃ մտաց, նոր օրհ-
նութե̃ զնորոգիչդ կենաց իմոց
բարեբանել։ Դու տէր՝ և զառա-
ւօտս խաղաղութեան մինչև ցերե-
կոյ շնորհեա ինձ առանց փորձա-

նաց

նաց անցուցանել, որ խնդրեմ զարքայութիւն քո 'ի սկզբան ա՟մ խնդրուածոց իմոց։

Տէր երկնի և երկրի, և Հրամայօղ ծովու և ցամաքի, դու և զայլ բարիս բնութե՟՝ շնորհեաց և փառաց ողորմութե՟ քով պարգևեա՛ ինձ, և արդար վաստակոց յաւուրս յայսմիկ արժանի արա. որով և կարիք իմ և իմոցս լցցին, և աղքատք 'ի փշրանաց սեղանոյ մեծատանդ յագեսցին. և օրհնեսցեն զքեզ այժմ և յաւիտեանս, ամէն։

Հանգանակ հաւատոյ։

Հաւատամք 'ի մի ա՟ծ 'ի Հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից։ Հաւատամք և 'ի մի տէր յ՟ս ք՟ս՝ յորդին ա՟յ, ծնեալն յա՟յ

հօրէ միածին, այսինքն յէութենէ
հօր. Ա՟ծ յա՟յ, լոյս 'ի լուսոյ, ա՟ծ-
ճշմարիտ յա՟յ ճշմարտէ, ծնունդ՝ և
ոչ արարած: Նոյն ինքն 'ի բնութ՟է
հօր. որով ա՟մ ինչ եղև յերկինս և
յերկրի՝ երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և
վն՟ մերոյ փրկութեան իջեալ յերկ
նից՝ մարմնացաւ, մարդացաւ,
ծնաւ կատարելապէս 'ի մարիամայ
սրբոյ կուսէն՝ հոգւով սրբով:
Որով էառ զմարմին զհոգի և զմիտս
և զա՟մ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտա
պէս և ոչ կարծեօք: Չարչարեալ,
խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր
յարուցեալ. ելեալ յերկինս նովին
մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր.
Գալոց է նովին մարմնովն և փառ-
օք հօր դատել զկենդանիս և զմ-
եռեալս. որոյ թագաւորութեանն
ոչ գոյ վախճան:

Հաւատամք և 'ի սբ̃ Հոգին յա-
նեղն և 'ի կատարեալն · որ խօսեցաւ
յօրէնս և 'ի մարգարէս և յաւետա-
րանս ։ Որ էջն 'ի յորդանան · քա-
րոզեաց յառաքեալսն · և բնակե-
ցաւ 'ի սուրբսն ։

Հաւատամք և 'ի մի միայն ը̃հան
րական և առաքելական եկեղեցի ։

Հաւատամք 'ի մի մկրտութի̃ ,
յապաշխարութի̃՝ 'ի քաւութի̃ և 'ի
թողութի̃ մեղաց ։ 'Ի յարութիւն
մեռելոց · 'ի դատաստանն յաւիտե-
նականն՝ հոգւոց և մարմնոց , յար-
քայութիւնն երկնից և 'ի կեանսն
յաւիտենականս ։

Իսկ որք ասենն , էր երբեմն
յորժամ ոչ էր որդի , կամ էր
երբեմն յորժամ ոչ էր սբ̃ Հոգին ·
կամ թէ յոչէից եղեն , կամ յայլմէ
էութենէ կամ 'ի գոյութե̃ ասեն
լինել զանեղ որդին ա̃յ , կամ զսբ̃

հոգին • և Թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք • զայնպիսի ասացօղն նզովէ կաթողիկէ և առաքելական եկեղեցի •

Ի սբյ լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս , երկիր պագանելով սբյ երրորդու-թեանն և մի ածութեն հօր և որդ-ւոյ և հոգւոյն սբյ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն •

Փառաբանութիւն։

Փառք ՚ի բարձունս այ , և յեր-կիր խաղաղութի , ՚ի մար-դիկ հաճութի։ Օրհնութի քեզ ՚ի բարձունս • օրհնեալ ես տէր ած մեր • օրհնեմք զքեզ , և գովեմք զքեզ։ Խոստովանիմք տէր զքեզ,



և

և երկիր պագանեմք քեզ․ փառաւորեմք զքեզ․ գոհանամք տ՟ր զքէն վասն մեծի փառաց քոց։

Տէր թագաւոր ո՟բդ երկնային՝ ա՟ծ և հայր ամենակալ։ Տէր և որդի հօր միածին յ՟ս ք՟ս և սուրբ որդի։ Տէր ա՟ծ գառն ա՟յ և որդի հօր, որ առեր զմերս ՚ի կուսէն։ Ողորմեցար բարձեր զմեղս աշխարհի, և արդ ընկա՛լ զաղաչանս մեր։

Սուրբդ որ նստիս ընդ աջմէ հօր՝ ողորմեա՛ց մեզ։ Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն տէր մեր յ՟ս ք՟ս․ Տէր և հոգիդ սուրբ, որ ՚ի փառս ա՟ծ ընդ հօր, ամէն․

Ու յա՟մ ժամ օրհնեւմք զքեզ, և գովեւմք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա տ՟ր զօրս զայս խա-

զաղութ՟բ, և առանց մեղաց պահեա՛ զմեզ: Օրհնեալ ես Տ՟ր Ա՟ծ հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն ս՟բ քո յաւիտեանս, ամէն:

Օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութ՟իս քո. օրհնեալ Տ՟ր ուսո՛ ինձ զարդարութ՟իս քո. օրհնեալ տէր ուսո՛ ինձ զարդարութ՟իս քո:

Տէր ապաւէն եղեր մեր ազգէ յազգ: Ես ասացի Տ՟ր ողորմեա՛ ինձ, և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ: Ցո՛յց մեզ Տ՟ր զողորմութ՟իս քո, և զփրկութ՟իս քո տո՛ւր մեզ:

Տէր ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես Ա՟ծ իմ:

Ի քէն է Տ՟ր աղբիւր կենդանութ՟ե, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ձգեա՛ զողորմութ՟իս քո՝ որք ճանաչեն զքեզ Տ՟ր:

Աղօթք հանգստեան ժամուն.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն սբ. և ՚ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ այ առ ած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութբ աստուած աստուած իմ.

Արդ ընդէր տրտում ես անձն իմ, կամ ընդէր խռովես զիս. յուսա՛ առ ած, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց ած է:

Փառք հօր և որդւոյ և:

Եւ ևս խաղաղութե զտէր աղա:

Օրհնութիւն և փառք հօր և որդ:

Եկեսցէ ՚ի վ՟ր իմ ողորմութի՟ն քո տ՟ր, և փրկութի՟ն քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք, զի ես ՚ի բանս քո յուսացայ:

Մի ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութե՟ մինչև յոյժ, զի յիրաւունս քո յուսացայ:

Պահեցից զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից.

Գնայի ես յանդորրու, զի ընդ-պատուիրանս քո խնդրեցի:

Խօսէի զվկայութի՟ս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի.

Խորհէի ՚ի պատուիրանս քո զոր սիրեցի:

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան քում.

Յիշեա՛ զբանս ծառայի քո՝ յոր
և յուսացուցեր զիս :

Այս մխիթարեաց զիս ՚ի խոնար-
հութեան իմում, զի բան քո կե-
ցոյց զիս :

Ամբարտաւանք անիրաւեցան
յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես
ոչ խոտորեցայ :

Յիշեցի զիրաւունս քո յաւի-
տենից տէր, և մխիթարեցայ :

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղա-
ւորաց, և որք թողլին զօրէնս քո :

Գովելի էն ինձ իրաւունք քո՝
՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ :

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո
տէր, և պահեցի զօրէնս քո :

Այս եղև ինձ ճանապարհ ՚ի
կեանս, զի զարդարութիւնս քո
խնդրեցի :

Զանօրէնս ատեցի, և զօրէնս
քո սիրեցի :

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես 'ի բանս քո յուսացայ։

Ի բաց եղերուք յինէն չարք, և քննեցից զպատուիրանս այ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս, և մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս, և խորհեցայց յիրաւունս քո յամենայն ժամ։

Անարգեցեր զամենեսեան որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց, զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա։

Յանցաւորս համարեցայ զա՛մ մեղաւորս երկրի, վն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բևեռեա՛ ընդ երկիւղ քո ըզմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ

առաջի քո տէր , ըստ բանի քում իմաստուն արա զիս ։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր , և բանիւ քո փրկեա՛ զիս ։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո , յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո ։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո , զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են ։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս , զի զպատուիրանս քո ընտրեցի ։

Յանկացայ փրկութեան քում տէր , և օրէնք քո խօսք իմ էին ։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ , և իրաւունք քո օգնեսցեն ինձ ։

Մոլորեցայ ես ոպ̅ զոչխար կորուսեալ , խնդրեա՛ զծառայս քո զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ ։

Մի՛ եկեսցեն 'ի վ̅ր մեր ոտք ամբարտաւանից , և ձեռք մեղաւո-

րայց մի՛ դողացուսցեն զմեզ ։
Ընդ անկցին ամենեքեան որք
գործեն զանօրէնութի̄ մերժեսցին
և այլ մի՛ կարասցեն հաստատիլ ։
Ես ՚ի տ̄ր յուսացայ, ցնծացայց
և ուրախ եղէց յա̄ծ փրկիչ իմ ։
Տէր տէր ես ինձ զօրութի̄ և
կացոյց զոտս իմ ՚ի հաստատութե̄ն,
՚ի վ̄ր պարանոցի թշնամւոյն կացոյց
զիս, և հանգոյց զիս երագ երագ ։
Որ բնակեալն է յօգնութիւն
բարձրելոյն, ընդ հովանեաւ ա̄յ
յերկինս հանգիցէ ։
Ասասցէ տ̄ն ընդունող իմ ես,
ապաւէն իմ ա̄ծ և ես յուսամ ՚ի նա ։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ
որսողին, և՚ի բանից ՚ի խռովուէ̄ ։
Ի թիկնամէջս իւր ընկալցի ըզ
քեզ ՚ի հովանի թևոց ն̄ր յուսասցիս ։
Որպէս զէն շուրջ եղիցի զքև
ճշմարտութիւն նորա ։

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գի-
շերի, և ո՛չ 'ի նետէ որ թռչի 'ի
տուէ։

Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի
գայթակղութենէ դիւին 'ի հա-
սարակ աւուր։

Անկցին 'ի կողմանէ քումմէ հա-
զարք և բիւրք ընդ աջմէ քումմէ,
և առ քեզ ինչ ո՛չ մերձեսցին։

Բայց միայն աչօք քովք հայես-
ցիս դու և զհատուցումն մեղաւո-
րաց տեսցես, զի դու տ՟ր յոյս իմ ես։

Զբարձրեալն արարեր քեզ
ապաւէն, զի ո՛չ հասցեն առ քեզ
չարք, և տանջանք մի՛ մերձեսցին
'ի յարկս քո։

Հրեշտակաց իւրոց պատուիր-
եալ է վասն քո, 'ի պահել զքեզ
յամենայն ճանապարհս քո։

'Ի բազուկս իւրեանց ընկալցին
զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքա-
րի զոտն քո։

Ի վե՛ր իժից և քարբից գնասցես դու, և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն։

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա, հովանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ։

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա, և առ նմա եղէց ի նեղութեան։

Փրկեցից և փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես յերկինս։

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ, և ո՟պ աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Նոյնպէս են աչք մեր առ քեզ տէր աստուած մեր, մինչև ողորմեսցիս ի վերայ մեր։

Ողորմեա՛ մեզ տ՟ր ողորմեա՛ մեզ, զի բազում լցաք արհամարհանօք։

Յուս առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ արհամարհանօք ամբարտաւանից։

Ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս, և ՚ի զօրութ՟է քում իրաւ արա ինձ։

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց, ունկն դիր բանից բերանոյ իմոյ։

Օտարք յարեան ՚ի վերայ իմ և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան զքեզ աստուած առաջի իւրեանց։

Ահա՛ ա՟ծ օգնական իմ, և տէր ընդունօղ հոգւոյ իմոյ։

՚Ի դարձուցանել զչարն ՚ի թըշնամիս իմ, ճշմարտութեամբ քով սատակեա՛ զնոսա,

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ, և խոստովան եղէց անուան քում տէր զի բարի է։

Յա՟մ նեղութ՟է իմմէ փրկեցեր զիս, և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

 Օրհ

Օրհնեալ ես դու տէր Ած հարցն մերոց, գովեալ և առաւել բարձրացեալ յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց քոց, գովեալ և առաւել բարձր։

Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբութեան քո, գովեալ և առա։

Օրհնեալ ես ՚ի վր աթոռոյ արքայութեան քո, գովեալ և առա։

Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովբէս և հայիս յանդունդս, գովեալ և առա։

Օրհնեալ ես ՚ի վերայ հաստատութե երկնից, գովեալ և առա։

Օրհնեցէք զԱծ ՚ի սրբութե նորա, օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նորա, օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութեան նորա։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհ-



նու

նութեան , օրհնեցէք զնա սաղ-
մոսիւք և օրհնութեամբ .

Օրհնեցէք զնա ցնծութբ ,
գովեցէք զնա ուրախութեամբ ։

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր
գովեցէք զնա 'ի բարբառ լսելի .

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհու-
թեան , ամ հոգիք օրհնեցէք զՏր ։

Տէր արձակեա զծառայս քո
Տր ըստ բանի քում 'ի խաղաղութի ,
զի տեսին աչք իմ զփրկութի քո
զոր պատրաստեցեր առաջի ամե-
նայն ժողովրդոց ։

Լոյս յայտնեցար հեթանոսաց ,
և փառք ժողովրդեան քում Իէլի .

Ձգեցեր զձեռն քո և փրկեաց
զիս աջ քո , և Տր հատուսցէ վս իմ ։

Տէր ողորմութիւն քո յաւի-
տեան , զգործս ձեռաց քոց մի' ան-
տես առներ ։

Տէր հա՛ն 'ի բանտէ զանձն իմ ,

գոչանամ զանուանէ քումմէ:

Լու քեզ սպասեն արդարք՝ մին-չև հատուսցես:

Մեծացուսցէ անձն իմ զՏր, և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով:

Այց արար ՚ի վր խոնարհութե աղախնոյ իւրոյ, այսուհետև երանիցեն ինձ ամ ազգք:

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա:

Ողորմութի արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց՝ զքաղցեալս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իսէլի ծառայի

իւրոյ , յիշելով զողորմութիւն իւր ։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամու և զաւակի նորա յաւիտեան ։

Փառք զօրութեան ծառայի քո , կեցո զորդի աղախնոյ քո , և արա առ իս նշան բարութեան ։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն , զի դու տէր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս ։

Փառք հօր և որդւոյ և ։

Մաղթանք ։

Անձն իմ ՚ի ձեռս քո է յամ ժամ, և ՚ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ Թագաւոր երկնաւոր , զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմք առ քեզ ։ Որ երկայնամիտ ես առ ամենեսեան , մի անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ ․ այլ պահեա պատուական և սուրբ խաչիւ քով ՚ի խաղաղութեան ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ա՟ծ և խնդրեսցուք ՚ի նմանէ, զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան՝ որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս ՚ի դիւական խռովութե՟, ամբողջ պահելով զհոգի և զմարմինս մեր՝ մինչև ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց։ Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ողորմեա՛։ Կեցո՛ տէր։

Զհանգիստ գիշերիս խաղաղութե՟ անցուցանել հաւատով ՚ի տ՟նէ խնդրեսցուք։ Շնորհեա՛ տ՟ր։

Զհրեշտակ խաղաղութե՟ պահապան անձանց մերոց ՚ի տեառնէ խնդրեսցուք։

Զքաւութ՟ի և զթողութ՟ի յանցանաց մերոց ՚ի տ՟նէ խնդրեսցուք։

Զսրբոյ խաչին մե՟ծ և կարող զօրութիւնն յօգնութ՟ի անձանց



մե

մերոց 'ի տեառնէ խնդրեսցուք ։
Եւ եւս միաբան վասն ճշմարիտ
և սուրբ հաւատոյս մերոյ զտէր
աղաչեսցուք ։

Տէր ողորմեա՛ ։

Զանձինս մեր և զմիմեանս տ̃ն
ա̃յ ամենակալին յանձն արասցուք ։
Քեզ տ̃ր յանձն եղիցուք ։
Ողորմեաց մեզ տէր ա̃ծ մեր՝
ըստ մեծի ողորմութե̃ քում. ասաս-
ցուք ամենեքեան միաբանութե̃ ։
Տէր ողորմեա՛ . տէր ողորմեա՛ .
տէր ողորմեա՛ ։

Աղօթք ։

Տէ՛ր ա̃ծ մեր դու պահեա՛ ըզ
մեզ խաղաղութե̃ 'ի գիշերիս
յայսմիկ և յամենայն ժամանակի ։
Ընդ սուրբ երկիւղ.քո բեւեռեալ
պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր ։
Ո̃պ զի յա̃մ ժամ քեւ պահպանեալ

 լի

Լիցուք յորդայթից թշնամւոյն ։ Եւ քեզ հանցուք զօրհնութի՟ և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ ։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Հրեշտակի խաղաղութե՟ յանձն արա զանձինս մեր տէ՛ր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի, յարթնութե՟ և 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի ։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէ՛ր ա՟ծ մեր, ընդ հանգիստ գիշերիս շնորհեա՛ խաղաղութ՟բ անցուցանել, և հասանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն ամենասուրբ երրորդութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

# Սաղմոս • 4։

Աղաղակութեամբ յայս և՛ի սոյն ննջեսցուք և զարթիցուք, զի դու տէր միայն առանձին յուսով քո բնակեցուցեր զմեզ։

՚Ի կարդալ իմում լուար ինձ ա̃ծ ըստ արդարութ̃ե, ՚ի նեղութ̃է ինձ անդորր արարեր • ողորմեա́ ինձ և լո́ւր աղօթից իմոց •

Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնան-րութիւն և խնդրէք զստութիւն։

Ծանիրո́ւք զի սքանչելիս արար տէր սրբոյ իւրում, և տէր լուիցէ ինձ ՚ի կարդալ իմում առ նա ։

Բարկանայք և մի́ մեղանչէք, զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր՝ յան-կողինս ձեր զղջացարուք ։

Մատուցէ́ք պատարագս արդա-րութ̃ե, և յուսացարո́ւք ՚ի տէր։

Բազումք ասէին թէ ո́ ցուցցէ

մեզ զբարութիւն տեառն․ Նշանե-
ցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և
ետուր ուրախութի̃ սրտից մերոց։

'Ի պտղոյ ցորենոյ գինոյ և ձի-
թոյ իւրեանց լցուցեր զնոսա։

Խաղաղութեամբ յայս և'ի սոյն
ննջեսցուք և զարթիցուք, զի դու
տէր միայն առանձին յուսով քո
բնակեցուցեր զմեզ։

Ա․լէլուիա Օրթի․
Խաղաղութիւն ամենեցուն․
Եւ ընդ հոգւոյդ քում․
Երկիւղածութեամբ լուարուք։
Ա՞յ աւետարանէն՝ որ ըստ Յովհաննու։
Փառք քեզ տէր աստուած մեր։
Պռօսխումէ։
Ասէ աստուած։

Տէրն մեր յ̅ ք̅ ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ․ եթէ
ոչ հատն ցորենոյ անկեալ


յեր

յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։ Որ սիրէ զանձն իւր՝ որձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Փառք քեզ տէր ած մեր։

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զտէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց՝ և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. Ամենակալ տէր աստուած մեր. կեցո և ողորմեա։

Պահպանեա զմեզ քս ած մեր՝ ընդ Հովանեաւ սբ և պատուա-



ուա

ուական խաչիւդ քով ՚ի խաղաղու-
թեան , փրկեա՛ յերևելի և յանե-
րևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա՛
գոհութեամբ փառաւորել զքեզ
ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ .
այժմ և միշտ:

Օրհնեալ տէր մեր յ͞ս ք͞ս , ամէն:

Հայր մեր որ յերկինս:

Անկանիմք առաջի քո ս͞բ ա͞ծա-
ծին և աղաչեմք զանարատ
զկոյսդ , բարեխօսեա՛ վ͞ն անձանց
մերոց , և աղաչեա՛ զմիածին որդիդ
փրկել զմեզ ՚ի փորձութենէ և յա͞մ
վտանգից մերոց:

Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշե-
րանոյ , ասացեալ սրբոյն Գրիգորի Նա-
րեկացւոյ: ԺԲ

Անկա՛լ քաղցրութ͞բ տէ՛ր ա͞ծ
հզօր՝ զդառնացողիս զաղա-
չանս . մատի՛ր գթութ͞բ առ պատա-

կտակեալս դիմօք · փարատեա՛ ամե-
նապարգև՝ զամօթական տխրու-
թիս · բարձ յինէն ողորմած՝ զան-
բերելի ծանրութիս · անջրպետեա՛
հնարաւոր՝ զմահացու կրթութիս ·
աւարեա՛ միշտ յաղթօղ՝ զխաբողին
հաճութիս · բացադրեա՛ վերնային՝
զմոլեգին մառախուղ · կնքեա՛ կե-
ցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս ·
ցրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին
չար գտմունս · խորտակեա՛ ամենքըն-
նին՝ զմարտողին դիմեցմունս ։
Տեառնագրեա՛ քո անուամբդ ըզ-
լուսանցոյց երդ յարկիս · պարփա-
կեա՛ քո ձեռամբդ զառաստաղ տա-
ճարիս · գծագրեա՛ քո արեամբդ
զմուտ սեմոց սենեկիս · կերպացո՛
զքո նշանդ ՚ի հետս ելից մաղթո-
ղիս · ամրացո՛ քո աջովդ զհանգստ-
եանս խշտի · մաքրեսցես ՚ի հաղբից
զծածկարան անկողնոյս · պահես-
ցե՛ս

ցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս․ անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս․ կացուսցես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ․ կարգեսցես 'ի դիմի ընդդեմ դիւացն դասու։ Տուր համդիստ բերկրութե մահահանգոյն նիրհմանն 'ի խորութե գիշերիս, բարեխօսութբ հայցուածոյ սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանց զգայարանացս խնամոք անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեց, կենցաղական զբաղմանց, աներջական երազոց, խօլականաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անմխասելի պաշտպանել։ Եւ սթափեալ վերստին 'ի ննջմանէ ծանրութե, ամենազգաստ արթնութբ հոգենորոգ զուարթութբ 'ի քեզ ար-



ձա

ճանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել: Ո՛վ դու փառաւորեալ ես յա̃մ արարածոց յաւիտեանս յաւիտենից, ամէն:

## Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: ԽԱ

Որդի՛ այ̃ կենդանւոյ օրհնեալ յա̃մի՝ հօրդ ահաւորի անքննելին ծնունդ, որ անկարանայ առ՚ի քեն և ո՛չ ինչ: Որ ՚ի ծագել աննստուեր նշուլից ողորմութե̃ քոյ փառաց, հալին մեղք· հալածին դևք· ջնջին յանցանք· խզին կապանք· խորտակին շղթայք· կենդանածնին մահացեալք· բժշկին հարուածք· ողջանան վէրք· բառնին ապականութիւնք· տեղի տան տխրութիւնք·

Թիւնք · նահանջին հեծութեանք ·
փախնու խաւարն · մեկնի մէգն ·
մերժի մառախուղն · փարատի
մուայլն · սպառի աղջամուղջն · վե-
րանայ մութն · գնայ գիշերն · տա-
րագրի տագնապն · չքանան չա-
րիքն · հալածին յուսահատութիւնքն ·
և թագաւորէ ձեռն քո ամենակար՝
քաւիչդ ամի ։ Որ ոչ եկիր կորու-
սանել զմարդկան ոգիս՝ այլ կեցու-
ցանել , թող ինձ զանթիւ չարիսն
իմ բազում ողորմութեամբդ ։ Որ դու
միայն ես յերկնի անճառ , և յերկ-
րի անզննին · 'ի տարր գոյի , և յեզրս
ծագաց աշխարհի · սկիզբն ամի , և
յամի · ամենայն լրմամբ օրհնեալ
'ի բարձունս · և քեզ ընդ հօր և
հոգւոյդ փառք յաւիտեանս ,
ամէն ։

## Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ։ ՁԹ

Որ և էր · կեանք և արարիչ · ողորմած · գթած · լոյս · երկայնամիտ · անոխակալ · մարդասէր · ամենագութ · պարգևատու · փրկիչ · օրհնեալ · գովեալ · բարեբանեալ ։ Պարան ամրութեան · պատսպարան վստահութե՟ · առանց նենգութե՟ բարի · առանց խաւարի ճառագայթ · քաւիչ մեղաց · ողջացուցիչ վիրաց · անհասանելեաց հնարք · անմատչելեաց հպաւոր · անյուսութե՟ ելք · անուն քո խոստովանեալ՝ ոչ որդի · և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի , և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելւոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան , յաւիտեանս , ամէն ։

## Աղօթք նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ: ՂԴ

Ո՜վ յաւիտենական. բարերար եւ ամենակալ. ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ գիշերոյ. կեանք ՚ի մահու եւ լոյս ՚ի խաւարի. յոյս ամենեցուն եւ երկայնմտութիւն տարակուսելոց: Որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուազ ծագումն եւ անմուտ արեգակն, քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեամբ եղելոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց:

Որ լսես զհեծութիւն կապելոց, եւ հայցես յաղօթս խոնարհաց, եւ ընդունիս զխնդրուածս նոցա, աստուած իմ եւ թագաւոր իմ, կեանք իմ եւ ապաւէն իմ, յոյս իմ եւ վստա



հու

հութի իմ, յիսուս քն անձդ անմի,
որք հանգուցեալ ՚ի հոգիս սրբոց
միխիթարութի վշտաց, և քաւարան
մեղուցելոց, որ գիտես զամ յա-
ռաջ քան զլինել նոցա: Աղաչեմ
զպահպանողական զօրութիւն աջոյ
քո, և փրկեա զիս յերկիւղէ գիշե-
րի և ՚ի դիւէ չարէ. ով զի զյիշա-
տակ սոսկալի և ահր քո անուանդ՝
միշտ համբուրեալ շրթամբք հոգ-
ւոյ ըղձութե շնչոյ, կեցից պահ-
պանեալ ընդ այնոսիկ որ կարդան
զքեզ ՚ի բոլոր սրտէ:

Եւ ՚ի դրոշմէ խաչի քոյոյ նշա-
նիդ, զոր ածային արեամբ քո
ներկեալ նորոգեցեր, և ՚ի նոյն
շնորհ որդեգրութե զմեզ մկրտե-
ցեր, և ՚ի փառս պատկերի քո նկար
եալ յօրինեցեր, այսու պարգևօք
ածականօք՝ ամաչեսցէ սատանայ.
քակտեսցին մեքենայքն. բարձցին


որո

որոգայթքն · պարտեցին մարտու-
ցեալքն · պակասեցին զէնքն սայ-
րասուրք · մերժեցի մէգն · փարա-
տեցի խաւարն · մեկնեցի մառա-
խուղն : Բազուկ քո հովանացի,
և աջ քո կնքեցէ · վասն զի գթած
ես և ողորմած, և անուն քո կոչեց
եալ է 'ի վ՟ր ծառայից քոց : Եւ-
քեզ ընդ հօր՝ հոգւոյդ սրբոյ՝
փառք և իշխանութի յաւիտեանս
յաւիտենից, ամէն :

Աղօթք հարկաւոր իւրաքանչիւր անձանց հաւատացելոց 'ի ք՟ս · Արարեալ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ հայոց կաթուղի-կոսի :

Հաւատով խոստովանիմ, և եր-կիրպագանեմ քեզ՝ Հայր և Որդի և ս՟բ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ա՟մ եղելոց · ողորմեա՛ քո արարածոցս :

Հաւատով խոստովանիմ, եւ եր-
կրպագանեմ քեզ՝ անբաժանելի
լոյս , միասնական ս̅բ երրորդութի̅ եւ
մի ա̅ծութի̅ , արարիչ լուսոյ եւ հա-
լածիչ խաւարի . հալածեա՛ 'ի հոգ-
ւոյ իմմէ զխաւար մեղաց եւ ան-
գիտութե̅ , եւ լուսաւորեա՛ զմիտս
իմ 'ի ժամուս յայսմիկ աղօթել
քեզ 'ի հաճոյս , եւ ընդունել 'ի քէն
զխնդրուածս իմ . ողորմեա՛ ինձ
բազմամեղիս ։

Հա՛յր երկնաւոր ա̅ծ ճշմարիտ՝
որ առաքեցեր զորդիդ քո սիրելի
'ի խնդիր մոլորեալ ոչխարին , մեղայ
յերկինս եւ առաջի քո . ընկա՛լ զիս
ո̅պ զանառակ որդին , եւ զգեցո՛ ինձ
զպատմուճանն զառաջին զոր մեր-
կացայ մեղօք . ողորմեա՛ քո արա ։

Որդի՛ ա̅յ ա̅ծ ճշմարիտ՝ որ խո-
նարհեցար 'ի հայրական ծոցոյ՝ եւ
առեր մարմին 'ի ս̅բ կուսէն մարի

սմայ վ՟ն մերոյ փրկութե՟, խաչեցար
և թաղեցար և յարեար 'ի մեռելոց՝
և համբարձար փառօք առ Հայր,
մեղայ յերկինս և առաջի քո. յիշ-
եա՛ զիս որ՟պ զաւազակն՝ յորժամ
գաս արքայութե՟ քով. ողորմեա՛։

Հոգի՛ ա՟յ ա՟ծ ճշմարիտ՝ որ ի-
ջեր 'ի յորդանան և 'ի վերնատու-
նըն, և լուսաւորեցեր զիս մկրտութ՟ե
ս՟բ աւազանին, մեղայ յերկինս և
առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին
ա՟ծային հրով քո՝ որ՟պ հրեղէն լեզ-
ուօք ս՟բ զառաքեալսն. ողորմեա՛։

Անե՛ղ բնութ՟ի՝ մեղայ քեզ մտօք
իմովք, հոգւով և մարմնով իմով.
մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վ՟ն
անուանդ քում ս՟բյ. ողորմեա՛։

Տեսօ՛ղ ա՟մի՝ մեղայ քեզ խորհըր-
դով բանիւ և գործով. ջնջեա՛ զձե-
ռագիր յանցանաց իմոց, և գրեա՛
զանուն իմ 'ի դպրութե՟ կենաց.
ողորմեա՛։

Քննօղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութբ և անգիտութբ. թողութի շնորհեա մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ իմէ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեան քո զգայարանօք իմովք, և ամ անդամօք մարմնոյս. ողորմեա։

Ամենախնամ Տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո զի ոչ ևս հայիլ յայլս, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութի, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութի, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութի, և ոտից իմոց՝ ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութե. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամի. ողորմեա։

Հուր կենդանի Քս՝ զհուր սի-

րդ քո զոր արկեր յերկիր, բորբո-քեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում. ողորմեա՛.

Իմաստութ՟ի Հօր յ՟ս՝ տո՛ւր ինձ իմաստութ՟ի, զբարիս խորհիլ և խօ-սիլ և գործել առ՟ջի քո յ՟ամ ժամ. ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա՛ զիս. ողորմեա՛.

Կամեցօ՛ղ բարեաց տ՟ր կամարար՝ մի՛ թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա՛ ինձ լի-նիլ միշտ ըստ կամաց քոց բարեսի-րաց. ողորմեա՛։

Արքա՛յ երկնաւոր՝ տո՛ւր ինձ զարքայութ՟ի քո զոր խոստացար սի-րելեաց քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն,


և

և առնել զկամս քո․ ողորմեա՛։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փորձութե̃ց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յա̃մ վտանգից հոգւոյ և մարմնոյ․ ողորմեա՛։

Պահապա՛ն ա̃մի քս̃՝ աջ քո հովանի լիցի 'ի վ̃ր իմ 'ի տուէ և 'ի գիշերի․ 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել՝ զի մի՛ երբեք սասանեցայց․ ողորմեա՛։

Ա̃Ծ իմ՝ որ բանաս զձեռն քո, և լնուս զա̃մ արարածս ողորմութ̃ե քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ․ դու հոգա՛ և պատրաստեա՛ ըզպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան․ ողորմեա՛։

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո

զիս

զիս 'ի չար սովորութեց իմոց 'ի բարի
սովորութի . և բնակեա 'ի հոգի
իմ զսոսկալի օր մահուն , և զեր-
կիւղ գեհենոյն , և զսէր արքայու-
թեն , զի զղջացայց 'ի մեղաց , և
գործեցից զարդարութի . ողորմեա ։
Զաղբիւր անմահութե՝ աղբերացո՛
'ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխա-
րութե ոպ պոռնկին . զի լուացից
զմեղս անձին իմոյ յառաջ քան զե-
լանելն իմ յաշխարհէս . ողորմեա ։
Պարգևիչ ողորմութե՝ պարգևեա՛
ինձ ուղղափառ հաւատով , և բարի
գործով , և սբ մարմնոյ և արեան
քո հաղորդութբ գալ առ քեզ .
ողորմեա ։

Բարերար տր՝ հրեշտակի բար-
ւոյ յանձն արասցես զիս քաղցրութբ
աւանդել զհոգի իմ , և անխռով
անցուցանել ընդ չարութի այսոցն
որ են 'ի ներքոյ երկնից . ողորմեա ։

 Լոյս

Լո՛յս ճշմարիտ ք͞ս՝ արժանաւո-
րեա՛ զհոգի իմ ուրախութ͞ տեսանել
զլոյս փառաց քոց 'ի կոչման ա-
ւուրն, և հանգչել յուսով բարեաց
յօթևանս արդարոց մինչև յօր
մեծի գալստեան քո · ողորմեա՛ ։

Պատուաւո՛ր արդար՝ յորժամ
գաս փառօք հօր դատել զկենդա-
նիս և զմեռեալս , մի՛ մտաներ 'ի
դատաստան ընդ ծառայի քում ·
այլ փրկեա՛ զիս 'ի յաւիտենական
հրոյն , և լսելի՛ արա ինձ զերանա-
ւէտ կոչումն արդարոց յերկնից
արքայութ͞իդ · ողորմեա՛ ։

Ամենողո՛րմ տէր՝ ողորմեա՛ ա͞մ
հաւատացելոց 'ի քեզ , իմոց և օտա
րաց , ծանօթից և անծանօթից ,
կենդանեաց և մեռելոց · շնորհեա՛
և թշնամեաց իմոց և ատելեաց ըզ-
թողութ͞ի որ առիս յանցանաց , և
դարձո՛ զնս͞ 'ի չարեացն զոր ունին

 վասն

վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին ․ ողորմեա ։

Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա ՚ի բարի զխնդրուածս իմ՝ բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին, և յովհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սբյն գրիգորի մեր լուսաւորչին, և սբց առաքելոց՝ մարգարէից՝ վարդապետաց՝ մարտիրոսաց, հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կուսանաց, և ամ սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց ։ Եւ քեզ փառք և երկրպագութի անբաժանելի սբ երրորդութեանդ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Վասն սրբուհւոյ ածածնին բարեխօսութեն՝ տէ՛ր ընկալ զաղաչանս մեր, և կեցո՛ զմեզ ։

 Սուրբ

Սուրբ զմտածմնին և զամենայն
ոգւս բարեխօս արասցուք առ
Հայր 'ի յերկինս , զի կամեցեալ
ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ
զարարածս իւր ։ Ամենակալ տէր ։

Ընկալ տր զաղաչանս մեր բա-
րեխօսութբ ոբ մտածնին՝
անարատ ծնողի միածնի որդւոյ
քո , և աղաչանօք ամ սրբոց քոց ։
Տուր մեզ տր և ողորմեա , ներեա
քաւեա և թող զմեղս մեր ։ Արժա
նաւորեա գոհութբ փառաւորել
զքեզ ընդ որդւոյ և ընդ սբյ հոգ-
ւոյդ , այժմ և ։

Օրհնեալ տր մեր յս քս , ամէն ։

Հայր մեր որ յերկինս ։

Օ հանգստեան զաղօթս և զա
ղաչանս ընկալ մարդասէր
տծ 'ի հաճոյս բարերար կամաց

 քոց

քոց. և մեր մեղաց և բազում յան-
ցանացն։ թողութ՟ի շնորհեա՛. և քեզ
փառք յաւիտեանս, ամէն։

Փառք քեզ տէր ա՟ծ մեր, որ
պարգևեցեր զօրս զայս բար
եաւ և խաղաղութ՟բ անցուցանել։
Մարդասէր ա՟ծ՝ զառաջիկայ
գիշերս որ ՚ի վ՟ր մեր գալոց է, ՚ի
մեղաց փրկեա՛, ՚ի չարեաց ազատեա՛,
և ՚ի գործս բարիս առաջնորդեա՛։
Նուաստու օրհնութեանցն և
փառաբանութեանցն արժանի արա
զամենայն հաւատացեալս անուանդ
քում ս՟բ, և պահեա՛ ՚ի խաղաղութ՟ե։
Տէր ա՟ծ մեր՝ տո՛ւր զքո խաղա
ղութիւնդ ա՟մ աշխարհի, բա՛րձ
զցասումն և զպատուհասն ՚ի յա-
րարածոցս։
Ողորմեա՛ հարց և եղբարց մե-
րոց՝ կենդանեաց և հանգուցելոց։
Ողորմեա՛ զեկեղեցի շինողաց,


երախ

երախտաւորաց, և այնոցիկ որք տան զտուրս ողորմութե̃ դպրատանց, և ջանան միշտ հաստատուն պահել։

Տէր ա̃ծ՝ օգնեա՛ թագաւորացն քրիստոնէից, և իշխանացն բարեպաշտից, զօրաց և զաւակաց նոցին՝ պահելով ՚ի խաղաղութեան։

Տէր ա̃ծ մեր՝ պահեա՛ զմեզ ա̃մ՝ պարագայիւք՝ առողջ և անխռով ՚ի կամս ողորմութե̃ քո։

Նշանաւ սուրբ և պատուական խաչիւ քո՝ հալածեա՛ զերևելի և զաներևոյթ թշնամին ՚ի սահմանաց մերոց և ՚ի բնակութենէս մերմէ. փրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից, և արժանի՛ արա երանաւէտ կենացն անվախճանից, և քեզ փառք

յաւիտեանս, ամէն։

# Կիրակի աւուր:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն ս̃րյ ամէն:

## Հայր մեր որ յերկինս:

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ՚ի բանից երանելոյն Յովհաննու գառնեցւոյ:

Յաւիտենից ա̃ծ և արարիչ բոլորից, որ ամենակարող զօրութ̃բ քով ՚ի սկզբանէ արարեր զերկինս և զերկիր, յայսմ աւուր գոյացուցեր զլոյս հրամանաւ քով, և որոշեցեր զլոյսն ՚ի խաւարէն: Իհա խաւարեալս ազգի ազգի անօրէնութ̃բ, աղաչեմ զքեզ տէր իմ և ա̃ծ իմ՝ բարերար և բազում ողորմ, ծագեա՛ առ իս զողորմուե̃ զլոյս քո, և մերժեա՛ յինէն զխա-



ւա

ւարայլին խորհուրդս հարին, որով
անկեալ կործանեցայ յանդունդս
կորստեան, և կամ ՚ի տարակուսի.
Որ յամ̃ի կարող ես և հզօր, լոյս
անստուեր, աղբիւր անսպառ բար-
եաց, կենդանութե̃ պարգևատու,
ցոլացո́ յիս զփայլումն արդարար
շնորհաց հոգւոյդ քո ս̃բյ, և մաք-
րեա́ զսիրտ իմ և զհոգի ՚ի մթութէ̃
մեղաց իմոց և յամ̃ աղտեղութէ̃,
որով շլացեալ ոչ կարեմ հայիլ ՚ի
լոյս ա̃ծային պատուիրանաց քոց,
և գնալ ՚ի ճանապարհս արդարութե̃.
Ամենահայեաց ակն և աննիրհե-
լի պահապան նորոյս Իսրայէլի, որ
նստիս ՚ի քրոբէս և հայիս յան-
դունդս, նայեա́ց աչօք քաղցրութե̃
յապիկար ծառայս քո, որ խորա-
սուզեալ յանդունդս մեղաց՝ չու-
նիմ կար և զօրութի̃ ելանել ինք-
նին, և չէք իմ ձեռնտու և օգնա-


կան

կան սղաստել զիս յանհնարին տա-
րակուսանաց · այլ դու անարգա-
մեծար տէր՝ լեր ինձ այցելու և
պաշտպան , և զերծո զիս 'ի խորոց
սաստի չարեացս ամէնայնից անհա-
հանջելի հրամանաւ քով · զի չէք
ինչ որ արգելուլ կարիցէ զամենա
կարող զօրութիւն քո ,

Աղաչեմ զքեզ ողորմած՝ առա-
քեա՛ առ իս զհոգի ա̃ծուէ քո , որ
շրջէրով 'ի վ̃ր ջուրց կենդանագոր-
ծէր զարարածս քո , զի ծննդաբեր
արասցէ զամլու̃թ մտաց իմոց 'ի հա-
ճոյական բանից մաղթանս յընդու-
նելու̃թ կամաց բարձրելոյդ · զի ես
ինձէն առանց նպաստից նորին զոր
ինչ արժան է հայցել՝ ոչ գիտեմ։

Ո՛ի նա որ քննէ զմ̃տ և զխորհ-
ր̃դ , գիտէ նա և զպէտս մեր և ըզ
կարիս առաւել քան զոր խնդրեմք
և իմանամք , և գթացեալ 'ի տկա-



րու

րուԹիս մեր ուսուցանէ մեզ զնո-
սին հայցել հաւատով, և զտանել
առ՚ի քէն հանդերձ ԹողուԹեամբ
մեղաց մերոց ։

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց
բարեբանեալ՝ որ ոչ կացի յուխտին
իմում զոր ուխտեցի քեզ յաւուրն
փրկուԹեան, և ոչ զգուշացայ կալ
՚ի ճանապարհս օրինաց քոց. այլ
իշխանին մոլորուԹեան անսացեալ
խրատու՝ զառածեցայ յերկնագնաց
պողոտայէդ ՚ի փշալեղց մացառս
մեղաց և մահու. այլ դու խնամա-
կալ՝ որ ոչ ձանձրանաս ՚ի բարե-
րարելոյ, և ոչ յագիս յողորմածու-
Թէ, հոգւով պետուԹէ քո հաս-
տատեա զիս ՚ի պատուիրանս քո ան
դրդուելի՝ ուղղել վերստին զգնացս
ոտից իմոց առ տուիչդ կենաց ։

Տէր դու կարող և մարդա-
սէր, որ յառաջ քան զլինելուԹի


երկ

երկնի և երկրի պատրաստեցեր զար-
քայութիւն ՚ի ժառանգութիւն սրբոց
քոց, սրբեա և զիս յամ անօրէնու-
թէ իմմէ, և արժանաւորեա ընդ
նոսին յարքայութեան քում յերկինս
գոհութեամբ փառաւորել զամենազօր
տէրութիւնդ յաւիտեանս յաւի-
տենից, ամէն։

---

## Երկուշաբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն,

Հայր մեր որ յերկինս։

---

Աղօթք առ Երրորդութիւն, ՚ի բանից երա-նելւոյն Յովհաննու գառնեցւոյ,

Բարերար և ամենակալ՝ յոյս ապաւինի ամ տարակուսե-լոց տէր իմ և ած իմ, արարիչ էից

յանէից և նախախնամող բոլորից ։
որ յայսմ աւուր հրամանաւ քով
բաժանեցեր զբաղմութի՛ ջուրց ,
զ.քաղցունսն ամբարձեր ՚ի վեր
յամպս տեղալ ՚ի վե՛ երկրի , ՚ի բղ-
խել զաղբիւրս և խաղացուցանել
զգետս , և զաղտաղտինս թողեր յեր
կիր ստորին անսահման իմաստութ̃բ ։
և արկեր անջրպետ ՚ի մէջ նց̃ լցծ-
և հաստատուն զհաստատութին օդոց ,
զի փոխադարձ տուրևառութեամբ
ջուրց մշտնջենաւորս հաղորդել
կարասցեն ընդ միմեանս վերինքն և
ստորինք յօգուտ համօրէն արարչե-
լոց , և ՚ի պէտս ազգի մարդկան՝
զոր համբերձեալ էիր արարչագոր
ծել ՚ի վայելչութի երանաւէտ փա-
ռաց աստուածութեանդ .քո ։

Արդ՝ ես որ կամ իբրև զջուր
ստորին ապականեալ ՚ի ձահիճս պա-
նապան մեղաց դառնութ̃բ , և տապա-

կանեալ բազմօրինակ անօրէնութք ,
առ քեզ պաղատիմ արարիչ իմ և
յոյս , բարեգութ կամօքդ վերառ-
եալ զմիտս իմ 'ի ստորէ՝ մաքրա-
գործեա՛ որպ զջուրսն ամպոց յամ
աղտեղութեց քոյովդ սրբութբ ·
և ողջանութի նեխութե իմոյ 'ի
բա՛ց արա յինէն քոյովդ քաղցրու-
թբ , լինել հաճոյ ածութեան քո
կամաց՝ 'ի գովեստ փառաց անբաւ-
շնորհաց քոց ։

Մ՛ի հայիր 'ի բազմութի անօ-
րէնութե իմոյ որ անարժան եմ
գթոյ , և մի՛ դարձիր յինէն վասն
զազրութե յանցանաց իմոց յորում
կամ շաղախեալ · այլ մատի՛ր առ իս
անճառելի գթութեամբդ , և ողոր
մեա՛ ինձ ըստ բազում ողորմութե
քում , զի քաղցր ես առ ամենեսին
որք կարդան առ քեզ , և ապաւի-
նին 'ի քո մարդասիրութիւնդ ։

Դու Տէր՝ զանձրև գթութե՟ կամաց քոց՝ և զառատատաղեղ ողորմութե՟ քո զցօղ անձրևեա՛ 'ի սիրտ իմ, որ 'ի սաստիկ ցանկութե՟ չարեաց և'ի տապոյ անօրէնութե՟ երաշտացեալ՝ չունի ինչ բերս պտղոց բարութե՟. և ոռոգեալ պարարտացո՛ շնորհօք մարդասիրութեան քո՝ բերել զարդիւնս անեղծանելիս 'ի պաշար մշտնջենաւոր և անեզրական կենաց:

Լուր ինձ բարերար, քաւեա՛ անյիշաչար, և արա՛ զծառայս քո արժանի վերին օթևանացդ ընդ սիրելիս անուան քո սրբոյ, և ընդ կամարարս հաճոյից ա՟ծութե՟դ քո որ յերկինս և որ յերկրի. զի ընդ նոսին փառաւորեցից անլռելի օրհնաբանութե՟ զհայր և զորդի և զս՟բ հոգիդ. այժմ և միշտ և յաւիտե՟նս յաւիտենից, ամէն:

# Չորեքշաբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ամէն։

## Հայր մեր որ յերկինս։

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ՚ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ։

Արարչագործ Աստուած և ամենախնամ, որ յայսմ աւուր գթութեամբ կամաց քոց ծորովեցեր զջուրս որ ՚ի վերայ երկրի՝ ՚ի խորս ծովու, և զատուցեր զցամաքն ՚ի ջուրց․ և զարդարեցեր զայն զանազան բանջարօք և ծաղկազեղ վայելչութեամբ, և ազգի ազգի պտղաբեր ծառովք․ Իսկ արդ երկիրս անձնաւոր՝ փոխանակ բարեբոյս սերմանց առաքինագործ արգասեաց՝ բուսուցի փուշս մեղաց խոցոտիչս



Հոգ

հոգւոյ իմոյ , և փոխանակ բերոցն քաղցրութեան՝ պտուղս անօրէնութեան դառինս և մահաբերս ինձ գոյացուցի ։

Այլ դու անոխակալդ տ̅ր՝ հայեա՛ց քաղցրութ̅բ առ իս յարարած քո , և մի՛ անտես առներ ըզ գործս ձեռաց քոց ․ խլեա՛ յինէն զփուշս չարեաց և զարգասիս անօրէնութ̅ե զոր ես ինձէն պտղաբերեցի ․ և սերմանեա՛ վերստին 'ի միտս և'ի կամս իմ զբարիս , և զօգտակարն հոգւոյ իմոյ ․ յօժարել և ընտրել զայն , և առնել կամակար սիրով ։

Անօրէնութ̅իք իմ բարձրացան քան զգլուխ իմ , և տղմաշաղախ ջուրք մեղաց ծածկեցին զանձն իմ ․ և ահա ես քեզ առ բարեգութ ակերդ իմ պաղատիմ , երևեցո՛ զիս իբրև երկիր ցամաք , և նորոգեա՛


զսիրտ

զխիստ իմ բերել պտուղս բարիս զկամուխն և զանագան ըստ հաճոյից քոց մա՛րդասէր ։

Երկիրս բանաւոր՝ զոր զարդարեցեր բնաբոյս առաքինութ՟ , յամաքեցայ ՚ի հրատապ հրապուրանաց իշխանին օդոյս այսորիկ որ՟ դալարի ՚ի սաստիկ տօթոյ , և թօթափեցան ծաղիկք հոգւոյս · գօսացան ոստք առաքինութեան , և խամրացան բողբոջք բարեաց ։

Եւ ահա կորացել անձամբ առ քեզ աղաղակեմ պարգևիչդ կենաց , ցօղեա՛ յիս զցօղ խնամոց մարդասիրութե՟ քո , զի չորացաւ որ՟ խեցի զօրութիւն իմ , և որ՟ խոտ տանեաց ցամաքեցայ · և նորոգեա՛ զիս նորոգութ՟ շնորհաց քոց ըստ առաջնումն պայծառութեան ։

Արարեր զիս այգի վայելուչ ցանկով օրինաց պատսպարեալ՝ առ

՚ի բերել ողկոյզս քաղցրութեան ՚ի հաճոյս տնկագործողին իմոյ ա̄յ • իսկ ես ապստամբ կամօք արհամարհեալ զօրէնս քո, խոպանացայ չարաչար գնացիւք, և պտղաբերեցի խաղող դառնութե̄ բազմօրինակ անօրէնութեան ։

Եւ արդ մարդասէր խնայեա՛ յիս գթութբ̄, և դարման տար այգւոյս այսմիկ զոր տնկեաց աջ քո • ամրացո՛ զիս վերըստին օրինօքդ կենաց, և՚ի բաց արա յինէն զբաղձանս չարեաց որք սատեղնին ՚ի կամս իմ ։

Ա̄ծ զի վաստակեալ յարդիւնս առաքինութե̄՝ արժանի եղէց ընդունիլ զօրհնութիւն առ ՚ի քէն և վայելել յանձառ բարիսդ ընդ սուրբս քո յերկինս, և գոհութբ̄ փառաւորել զամենազօր տէրութի̄ քո, յաւիտեանս յաւիտենից,

ամէն ։

# Չորեքշաբաթի առաւօտ։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն։

## Հայր մեր որ յերկինս։

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, 'ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ։

Հաստիչ ամենազօր լուսաւորացն երկնից, և Ճարտարապետ ամենիմաստ տանս աշխարհի. որ յայսմ աւուր կարգեցեր զլուսաւորսն 'ի հաստատութենէ երկնից՝ զարեգակն և զլուսին և զաստեղացն պարս՝ 'ի նշանս և 'ի ժամանակս և յաւուրս և 'ի տարիս։

Արդ աղաչեմ զքեզ Տ՛Ծ կենարար՝ հաճոյական պարգևօք հոգեւորին շնորհաց քոց շարժեա զմիտս և զկամս իմ սիրել զքեզ յամենայն

որոտք, և ուղղեա՛ զընթացս անձին
իմոյ անհերքելի զօրութեամբ քով՝
գնալ անխոտոր ՚ի ճանապարհս հրա-
մանաց քոց։ Կապեալ կամ անզերծ-
շղթայիւք յանցանաց իմոց, ազա-
տեա՛ զիս ամենակալ։ Ընկեալ
դանդաչեմ ՚ի հաղբս կորստեան
գաղտնի որսողին, հա՛ն զիս բա՛րե-
գութ։ Ի բանդ անելանելի խա-
ւարին գործոց կաշկանդեալ տան-
ջիմ, ծագեա՛ առ իս զլոյս շնոր-
հիդ, և զերծո՛ զիս խնամակալդ
յազատութ̃ի կենաց անվախճանից։
Դու ես յոյս իմ և ապաւինութի·
դու իմ փրկութ̃ի· քեզ անկեալ-
եալ աղաչէ ամենամեղ անձն իմ։
Քեզ փափագի հոգի իմ մարդա-
սէր, որպ̃ փափագի եղջերու յաղ-
բերս ջուրց։ Ծարաւի եմ ողոր-
մութե քում՝ արբո՛ զիս. տանջ-
եալ ՚ի սովէ՝ յեղջերաց խոզիցն կե-
րակ

րակրիմ, զՀայր երկնաւոր ջամբեա՛ ինձ։ Մ՛րուր դառնութե՟ մեղաց և մահու արբեալ տագնապիմ չարաչար, զբաժակդ կենաց մատռուակեա՛ ինձ։ Մ՛երկացեալ դողամ յանագորուն աւազակաց իշխանին մահու, զգեստուք խնամոց քոց ծածկեա՛ զիս։ Վ՛իրաւորեալ եմ ՚ի թունաւոր նետից աներևոյթ թշնամւոյն, բժշկեա՛ զհարուածս իմ։

Նուարա՛ զիս զապախտաւոր ծառայս որ կարդամ առ քեզ՝ արժանաւոր երկնային հարսնարանին և անմահական սեղանոյն՝ ընդ այնոսիկ որք սիրեցին զքեզ ՚ի բոլոր սրտէ, և պահեցին զպատուիրանս քո․ զի ընդ նոսին փառաւորեցից զամենագութ մարդասիրութիւն քո, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

# Հինգշաբաթի աւուր:

Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն:

## Հայր մեր որ յերկինս:

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, 'ի բանից երանելոյն Յովհաննու դառնեցւոյ:

Որ արարչական գթով կենդանածնես զարարածս քո և խնամես քաղցրութբ՝ ած իմ և տէր. որ յայսմ աւուր ամենազօր հրամանաւ քով հաներ 'ի ջուրց զեռունս շնչոց կենդանեաց, և ըզ կէտս մեծամեծս, և զթռչունս թևաւորս. և ածային օրհնութբ քով օրհնեցեր զնս աճել և բազմանալ 'ի վերայ երկրի:

Արդ աղաչեմ զանփոփոխելի տէրութի բարերարութե քո, օրհ-

նեամ և զիս զստեղծուածս ամենա-
կալ ձեռին քո ծննդաբեր լինել
գործոց առաքինուե՟: Եւ զսերմն
հոգևոր կենաց՝ զոր անդստին բնա
ւորեալ ես 'ի խորս մտաց իմոց՝ զօ-
րացո՛ զիս աճեցուցանել կենսաբեր
խորհրդով 'ի ձեռն շնորհաց և ողոր
մութե՟ քո, զոր տաս ա՟մի և ոչ նա-
խատես. զի դու նոյն ես, և ամք
քո ոչ պակասին. Բանաս զձեռն
քո, և լցուցանես զպէտս և զկարիս
ամենեցուն յանսպառ գանձուց
քոց: Մի՛ թողուր զիս տէր իմ՝
ամուլ և անբեր գործոց բարուե՟.
մի՛ անտես առներ զտառապեալս
'ի քոց խնամոց վ՟ն բազմութե՟ յան-
ցանաց իմոց. Խոնարհեցո՛ զունկն
քո և լո՛ւր ինձ, զի աղքատացայ 'ի
բարեաց. սնուցանեցի կենարար
պատուիրանաց քոց, և յօժարեցայ
հաճել զկամս անձին իմոյ.

Յորդորեցեր զիս տաճար կեն-
դանի արարչութեան քում, և ես
զանձն իմ պատրաստեցի բնակա-
րան ատելեաց քոց դիւաց։ Պատ-
մուճան լուսազգեստ զգեցուցեր
ինձ 'ի հոգևոր ծննդեան, և ես
արկի զանձամբ հանդերձ խաւարի
մեղաց և մահու։ Ետուր ինձ սիրտ
մարմնեղէն խոկալ յօրէնս քո յամ
ժամ, և ես աման խորհրդոց անօ-
րէնութեան յօրինեցի։ Կարգեցեր
զիս լսելիս 'ի լուր պատուիրանաց
քոց, և ես բացի առ հրապոյրս բան-
սարկուին։ Կազմեցեր զիս լեզու-
գործի օրհնութե, և ես չարաչար
վարեալ՝ արարի զէն անիրաւութե։
Սերմանեցեր 'ի միտս իմ սերմն բարի
առաքինութե, և ես փուշս դժն-
դակ մոլութե բուսուցի ընդ այն։
Զբարիսն զոր պարգևեցեր ինձ
շնորհիւ նոքօք զկեանս, անմտութե

 իմով

իմոյ վատնեալ 'ի անառակս՝ ստացայ
ինձ մահ և կորուստ: Տիրական
իշխանութ̅ե և փառօք պատուեցեր
զիս, և ես կամաւ մատնեցի զանձն
իմ 'ի ծառայութիւն մեղաց:

Եւ այժմ առ քեզ ապաւինեալ
աղաչեմ բարերութ՝ քաւեա՛ զյան
ցանս իմ, և նորոգեա՛ զիս շնորհօք
ողորմութ̅ե քո: Ծարաւի եմ առ
քեզ Ա̅ծ իմ, արբո՛ ինձ զջուրդ
կենդանարար: Ժանգահար եղէ
ցանկութ̅ե չարեաց, ա՛րկ զիս 'ի բովս
հալոցաց, և սրբեա՛ հրով սիրոյ քոյ:
Բաղձանք երկրաւորացս տարագիր
արար զիս առ 'ի քէն, կարկառեա՛
առ իս զաջդ ամենազօր, և մատո՛
զիս առ քեզ: Փոխանակ մշտնջե-
նաւոր և անանց փառաց, զդիւրեղ
ծական և զապականացուն սիրե-
ցի, մի՛ թողուր զիս 'ի կամս իմ:

Տեղացին 'ի վերայ իմ թունա-



ւոր

ւոր նետք աներևոյթ թշնամւոյն ,
լեր ինձ վահան ամրութե՟ և տեղի
ապաւինի ապրեցուցանել զիս ։
Խորհուրդք չարեաց հարին զհո-
գիս 'ի հարուածս անողջանալիս ,
մատի՛ր առ իս գթութ՟ք , և բժշկեա՛
ամենահնար ։ Թշնամիք զանձն իմ
պաշարեցին և 'ի լարս խաբէութե՟
իւրեանց արգելին , զարթի՛ր զզօրու-
թի՟ քո և եկ 'ի կեցուցանել զիս ։
Մերկացուցին զիս անագորունք ,
և վէրս 'ի վերայ վիրաց յաւելին ։
զի ո՛չ զգեցայ զզրահն արդարու-
թե՟ , և ոչ եդի 'ի գլուխս իմ զսաղա
ւարտն յուսոյն փրկութե՟ ։ ո՛չ առի
զվահանն հաւատոյ , և ո՛չ զսուր
բանին ա՟յ ։ Այլ դու հզօր և ամե-
նակար՝ առ զէն և զասպար քո , և
արի՛ յօգնել ինձ ։ Խորտակեա՛ զզօ-
րութի՟ հպարտացեալ բռնաւորին ,
և ասա՛ դու ցանձն իմ թէ փրկութի՟
քո

քո ես եմ. Զրաժեցաւ է անձն իմ մինչև ՚ի մահ, մխիթարեա՛ զծառայս քո։ Ապերախտ գտայ առ երախտաւորդ, և բարկացուցի զանբարկանալի բնութիւդ. այլ դու անյիշաչար՝ մի՛ հատուցաներ ինձ ըստ անօրէնութեան իմում, այլ ողորմութեամբ քո քաւեա՛ զիս։

Ես քեզ աղաղակեմ ՚ի խորոց անդնդոց յոր ընկղմեալս եմ, ոպ յովնան ՚ի փորոյ կիտին. հա՛ն զիս ՚ի վիհէս խաւարի, վերաբերեալ ՚ի լոյս կենացդ յաւիտենից։ Խորասուզեալ եմ յանդունդս մեղաց կորստեան, մատո՛ զաջդ ամենազօր, և փրկեա՛ զիս։

Զանջնջելի հանապազ ՚ի խղճէ մտաց՝ զի դառնացուցի զքաղցրագութ Տէրդ իմ. և յոյժ վարանական խորհրդոց աններելի տանջանաց՝ որ դատապարտեալ և մնայ ինձ,

իբրև լեռնացեալ ամեհի ալեօք հողմակոծեն զանձն իմ. բարերար և անոխակալ՝ հզօր այցելու օգնեա ինձ, և հանդարտեցո զմրրկեալ ալիս խռովութեան մտացս ցօղով գթութեան քո։

Բազմութ՟ի անօրէնութ՟ե իմոյ՝ որք հեղեղք պղտորեալք գարշանաղայր գետոց ողողեցին զմեղուցեալս. այլ դու մարդասէր՝ շնչեա զհողմն քաղցրութ՟ե կամաց քոց, և ցամաքեցո զհոսանս չարեաց իմոց. և ողորմութ՟բ քով քաւեա զանօրէնութիւնս իմ, և թուակից արա սիրելեաց անուանդ քում սրբոց. զի ընդ նոսին փառաւորեսցիս զանոխակալ մարդասիրութ՟ի քո, այժմ և միշտ և յաւիտենից յաւիտեանս, ամէն։

# Ուրբաթի աւուր։

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն։

## Հայր մեր որ յերկինս.

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, ՚ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ։

Որպէս բարի և ամենակարող զօրութի̃ ա̃ծ յաւիտենական, որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի, և եհան զանասունս և զսողունս և զգազանս ըստ ազգի. և չհանդուրժեալ բնութե̃ բարւոյդ՝ արարեր զմարդն ՚ի հողոյ ՚ի պատկեր և ՚ի նմանութի̃ արարչապետիդ տիեզերաց, և կացուցեր տէր և իշխան ՚ի վ̃ր բոլորեցունց քո արարածոց. և զգուշացուցեր զնա կալ ՚ի պատուիրանի քում, և վայելել զբարիսն



զոր

զորս ետուր նմա ձրի և առանց
փոխարինի 'ի քումմէ առատութենէ.

Եւ արդ Տէր իմ և Աստուած իմ՝ որ
զիս հողս անարգութենէ այսպիսի ան-
կշռելի բարութեամբ բարգաւաճեցեր,
ես ինքնին հրապուրանաց թշնամ-
ւոյն կենաց անսասցեալ՝ պատուիրա-
նաց կենարարին հեստեցի, և օտա-
րացայ 'ի նմանութենէ հաստողիդ իմոյ
ոյ. Խղճի զգեղեցկութիւն կերպա-
րանաց հոգւոյս աղտի աղտի անօ-
րէնութեամբ, և ոչ զարհուրեցայ.

Զերծացուցեր զիս իմացական
մտօք խորշիլ 'ի չարէն և ընտրել
զբարին. իսկ ես վարեալ անմտութեամբ՝
յօժարեցայ 'ի չարիս. Ամբարձեր
զիս 'ի նմանութիւն Աստուածութեանդ քո
անձնիշխան կամօք. և ես ծառայ
եղեալ կրից մարմնոյս՝ հաւասարե-
ցայ անասնոց անբանից. Թողի ըզ
լոյս հրամանաց քոց՝ զոր ետուր ինձ

 ա-

տուաչնորդել նովաւ զգնացս ոտից
իմոց 'ի Ճանապարհս ուղիղ երկնից
օթեւանին . և ես ընդ խաւար գնա-
ցեալ անկայ 'ի խորխորատ անելա-
նելի կորստեան վհի :

Ո՜վ դու մարդասէր և երկայ-
նամիտ մի՛ խափան բարկանար ինձ ,
և մի՛ ոխս պահեր յաւիտեան . զի 'ի
քեզ անկայ ես յարգանդէ , և դու
ես Տծ իմ և տէր : Գիթա՜ յիս 'ի
գործս ձեռաց քոց , և նորոգեա՜
զխանգարեալ մեղօք պատկերս բա-
րերարութե քո 'ի ձեռն Տծեղէն
շնորհաց քոց : Լուսաւորեա՜ զաչս
մտաց իմոց ուղղել զշաւիղս իմ 'ի
Ճանապարհս օրինաց քոց : Սանձա
կոծեա՜ զերկրաքարշ բաղձանս և
զանբան կրիցս բռնութի երկիւ-
ղիւդ քով սրբով : Սառեա՜ զհոգի
իմ սիրով Տծութեդ քո՝ մատուցա-
նել պատարագ օրհնութե ըստ հա-

 ճոյ

ծգից բարերարութե՛ քո։ Մի թո-
ղուր զիս 'ի ձեռս թշնամւոյն փըր-
կութե իմոյ, որ հանդերձեալ է
որկանել զիս 'ի խաւարն արտաքին.
այլ եր այցելու բարեգթութե՛
քով, եւ փրկեա՛ զիս։

Յանկաւ բեկաւ զօրութի իմ 'ի
մահաբեր հարուածոց հակառակոր
դին, եւ մէջք իմ կցեցան 'ի հող 'ի
ծանրութե բեռանցս մեղաց. այլ
դու ողորմած յոյժ զբազմամեղ
անձն իմ, եւ զօրացո՛ զիս թօթափել
զչարիս, եւ խոկալ զհրամանս օրինաց
քոց. Հարայ 'ի թունոյ աներեւոյթ
վիշապին, եւ մահ անմեռ կայ առա
ջի իմ յամ ժամ. գթա՛ յիս օրհ-
նեալ եւ ամենողորմ, եւ մատո՛ ինձ
զդեղթափ ապաքինիչ երկնաձիր շը-
նորհաց քոց. զի կեցից եւ փառաւո
րեցից զանձառ մարդասիրութի քո
այժմ եւ յանվախճան յաւիտեանս,
ամէն.

# Շաբաթի աւուր:

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն:

## Հայր մեր որ յերկինս:

---

Աղօթք առ Հայրն երկնաւոր, 'ի բանից երանելւոյն Յովհաննու գառնեցւոյ:

Ով ամենակալ՝ անքննելի և անճառելի, անաշխատ բնութիւն և անտկարանալի զօրութիւն, որ յայսմ աւուր հանգեար յամենայն գործոց քոց զոր արարեր. և օրհնեցեր զնա և սրբեցեր ամենիմաստ խորհրդով և կանխագիտութեամբ քով:

Արդ ես ծնունդս մեղաց՝ անկեալ կամ յախտ դառնագին ցաւոց հոգեկան մահուց, զոր շնչեաց յիս հողմն մահածին իշխանին խաւարի, և ոչ գոյ ինձ հան-



գիստ

գիստ 'ի դժնդակ տանջանացս։
Այլ դու ամենազօր՝ ապաքինեա
զանբժշկելի հիւանդութիւն հոգւոյս
աննահանջելի հրամանաւ քով, և
հանգո՛ զիս յանհնարին տանջա-
նացս՝ որով հասեալ կամ 'ի դրունս
մահու. զի ամենայնի կարօղ ես և
հզօր, և չիք քեզ իր անհնարաւոր։
Սէր երկրաւորացս և բաղձանք
հեշտալեաց գերեալ գերեեալ ըզ
միտս իմ՝ չարաչար վշտօք ծառայե
ցուցանեն զիս հանապազօր 'ի զգա
յիս և 'ի մտախս, և ոչ երբէք տան
դուլ և դադար ոգի առնուլ, և
խոկալ խորհիլ զէր ազատութե
յանտանելի կրեցս կարեաց և դառն
աշխատութեցս. Նու ահա աղաչեմ
զքեզ բարերար՝ որ փրկութիւն ես
ամե և դիւրինչ վշտաց նեղելոց,
տուր ինձ գտանել ելս 'ի տառապա
նաց սաստիկ յաղատութե մշտնջենա
ւոր

ւոր կենաց և անմահ հանգստեան, յորմէ մերժեալ են ցաւք և հե-ծութիւնք։

Լ՛իք յանցանաց յուզեալք ՚ի հողմոյ հրապուրանաց բանսարկ-ուին բաղխեն զնաւակ մարմնոյս շինուածոյ, և սպառնան խորասոյզ առնել յանդունդս խաւարի ան-զերծ տանջանաց։ Իսկ դու բարե-գութ փրկեա՛ զիս ՚ի վշտացս ամե-նազօր աջովդ շնորհի, և հասո՛ ՚ի նաւահանգիստն անքոյթ խաղաղու-թե՟ երկնային յարկի, ուր ամբար-եալ պահին ա՟մ գանձք բարեաց և անզբաղ բերկրութիւնք։

Մ՛ի թողուր զիս տէր ա՟ծ իմ ՚ի կամս անձին իմոյ, զի մի՛ ըստ յօ-ժարութե՟ ապականեալ բնութեա՟ս ստորաքարշ եղէց յանցաւորս և ՚ի մնոտիս. և մի՛ ՚ի բացեայ առնիր յինէն նահանջելով զնպաստս շնոր-



հաց

հայց և ողորմութե՜ քո վն անօրէ-
նութե՜ իմոյ · այլ ըստ սովորական
մարդասիրութե՜ քում խնայեա՛ յիս
՚ի ստեղծուածս քո՝ որ առ քեզ ա-
ղաղակեմ կողկողագին հեծութբ ։

Տուր ինձ անոխակալ, գթա՛ մար-
դասէր, ներեա՛ անյիշաչար, և ողոր
մեա՛ բազմամեղ անձին իմոյ, ըստ
մեծի ողորմութե՜ քում․ արա՛ առ իս
նշան բարի ՚ի փառս անուանդ քում
սրբոյ, և քաւեա՛ զմեղս իմ ՚ի ձեռն
ամենաբաւական շնորհաց քոց · զի
քաղցր ես դու Տր, և գթութիւն
քո անչափ ։

Աղաչեմ զքեզ մարդասէր՝ մի՛
մատներ զիս ՚ի ձեռս դժոխորովայն
գազանաց, որ բացեալ զկոկորդս
իւրեանց՝ խնդրեն կեղեքել զհոգի
իմ ամենածախ ժանեօք · հա՛ր զնս
զօրութբ բազկի քո ՚ի հարուածս
անողջանալիս, և զերծո՛ զիս զծա-
ռայս

ուսյս քո 'ի մահաբեր վտանգես. զի դու ես փրկութի̅ իմ և կեանք, և առ 'ի քէն է օգնութի̅ իմ յա̅մ ժամ։

Տարակուսեալ վարանիմ վասն բազմութե̅ մեղաց իմոց, յորժամ նկարեմ առաջի աչաց տեսութե̅ մտացս զդատաստանն անաչառ, ըզ մերկապարանոց յանդիմանութի̅ն ա̅մ գործոց, զպատիժն սոսկալի մեղաւորաց և անդարձից, զհուրն անշէջ, զորդնն անմահ, և զդատապարտութիւնն յաւիտենական.

Աւ քանզի ոչ կարեմ իմանալս զօրութե̅ թօթափել յանձնէ զբեռինս մեղաց, և ազատիլ յարժանահաս պատժոցս. վասն որոյ անձամբ բեկելով գոչեմ առ քեզ մարդասէր, գործակից լեր ինձ 'ի դառնալ յետս յանօրէնութե̅ գնացից իմոց՝ և գիմել առ քեզ յա̅մ զօրութե̅ և 'ի մտաց, և սրտառուչ զղջմամբ գտա-

 նել

նել զթողութիւն և զշնորհս , և
ողորմութեամբ քով արժանաւո-
րել ընդ սուրբս քո մշտնջենաւոր
հանգստեան յարքայութեան քում
յերկինս , և ընդ նոսին փառաւո-
րել անլռելի գոհաբանութեամբ
զամենազօր տէրութիւն քո յամե-
նայն յաւիտեանս , ամէն ։

# ԱՂՕԹՔ

## 'Ի դէմ սուրբ պատարագին:

Երբ ասէ Քահանայն՝ Տէր Աստուած մեր որոյ կարողութիւնդ անքննին է"։

Դու ասա

Տէր իմ՝ անքննելի է այդ իմդ կարողութիւն. և անմահ և անհասանելի են փառք քո. այլ ողորմութիւնդ անչափ է, նոյնպէս և գթութիւնդ անբաւ:

Աղաչեմ զքեզ՝ բարեխօսութեամբ սրբոյ քահանայիս, յառատ ողորմութենէդ նայեաց 'ի մեզ տաճարս և յամ ժողովուրդս. նաև յիս անարժանս, և համարեա՛ զիս աղօթակից սոցին, և պարգևեա՛ առատապէս զողորմութիւնդ քո. վասն զի փառաբանիչ եմ սուրբ երրորդութեանդ:



Սէր

Եւս ասեն զԱմէն ածն, և մեծասարն հաւէասրէ
զԱւետարանն:

Համբուրելով ողջունեցից բանից
սրբոց աւետարանչացն, վն զի
կարօտ եմ 'ի լսել զգործսն այ:

Քահանայն 'ի ծածուկ ասէ Տէր ած մեր
զըղձակատարած զաղաչանս":

Արարիչդ իմ ած՝ որ զմեր հոգեղէն բնութիւս արժանաւորեցեր ըստ դասուց վերնոցն քեզ փառաբանութեն մատուցանել. արժանի արա զանպիտան ծառայս քո՝ հզօրիդ փառս տալ այժմ և յաւիտեանս:

Դպիրքն՝ Տէր ողորմեա:

Ակն ունիմ առ քեզ տէ՛ր և աղաչեմ. ողորմեա՛ ինձ 'ի մեծ ողորմութենէդ քումմէ՝ գթալով 'ի ծառայս քո. և առաքեա՛ 'ի վերայ իմ զողորմութիւնդ քո:



Ի

Քահանայն՝ Զի ողորմած և մարդա՛։

Մարդասիրին Աստուծոյ և ողորմածին տաց փառս և պատիւ այժմ և՛։

Երէց կարդայ զԱւետարանն.

Աղաչեմ զքեզ տէր իմ յիսուս քրիստոս . բա՛ց զլսելիս իմ . սրբեա՛ զմիտս իմ . արժանի՛ արա լսելոյ բանից Աստուծոյ աւետարանին քո , անմոռանալի լի մտօք պահել զհրամայեալսն ՚ի սմանէ . յորում փառք քեզ Աստուած :

Եւ ապա զՀաւատամքն ասեն , և երէց ասէ՛ Եւս խաղաղութեան՛ :

Խաղաղութեան տուող հայր Աստուած . մաքուր և անբիծ հաւատով ՚ի ժամ պաշտամանց աղօթից՝ աղաչեմ զքեզ . որ զի արժանի ընդունելութեան արասցես և լուիցես զձայն աղաչանաց իմոց . և ողորմութեամբ քով թողուցուս զյանցանս իմ . տէ՛ր իմ աղաչեմ զքեզ՝ զի յամենայն ժամ մաղթէ



աղերս

աղերս անարժանիս առաջի՛ քո ։
զի ահաւոր և մեծ է տ̅րութին քո ։
և տուր ինձ միաբան լինել ընդ ս̅րբ
քո ՚ի մի հաւատս վաստակիլ բարե
մտութբ ՚ի գործս արդարութե. և
պահեսցես ՚ի վ̅ջ իմ՝ զշնորհս արդա-
րութե և ողորմութե քո ։ տ̅ծ ա-
մենակալ ողորմեա՛ կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Տէր մեր և փրկիչ ։

Ո՛վ որդի ա̅յ՝ որ վ̅ն մեր համբե-
րեցեր մահու խաչի. և զչար-
չարին յանձն առեր. և զառատա-
պարգև ս̅բ հոգւոյն հանգուցեր յա-
ռաքեալսն ։ Աղաչեմ զքեզ՝ արժա-
նի արա և զիս առատա քոյին պար-
գևացդ մաքրելով ՚ի մեղաց ։

Քահանայն՝ Որպէս զի արժանաւորք է՛ ։

Ենք ամենեսեան արժանաւորա-
պէս փառաւորեմ զհայր և
զորդի և զսուրբ հոգին այժմ և
յաւիտեանս. ամէն ։ 

Քահանայն՝ Խաղաղութիւն ամենեցուն։

Տէր փրկչիդ իմոյ անկեալ երկիր պագանեմ. վն զի գիտող ես ամ խորհրդոց և գործոց. Աղաչեմ զքեզ՝ պահեա զիս յերկիւղէ չարեաց, և նման քոյին ճշմարիտ երկրպագողաց զիս զանարժանս համարեա՛. զի և ես ճշմարիտ հոգւով քե տր իմոյ այժմ և միշտ և հանապազ երկիւղիւ երկրպագանեմ. վն զի քեզ ոք երրորդութեդ վայելէ փառք պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն.

Սարկաւագն՝ Սաղմոս ասասցուք տն այ.

Քս ած՝ որ խոնարհեցար մարմնով և արեամբ քո գալ ՚ի պատարագիլ գառնդ անարատ. և հրեշտակային սպասաւորութբ լը ցեր զեկեղեցի քո սբ. և զիս զանարժանս արժանաւորեա՛ ընդ նո-

սին զոհաբանութիւն քեզ մատուցա
նել, ամէն :

Դպիրք եղանակէն Զոհաբանութիւն :

Տէր իմ յս քս փառք քեզ. որ վն
մեր փրկութե խոնարհեցար և
յանձն առեր պատարագիլ 'ի միջի
մերում մարմնով և արեամբ քով
սրբով :

Աղաչանք՝ Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք" :

Աղաչեմ զքեզ տէր՝ մի՛ համարիր
զիս ընդ երախայսն, և մի՛ ընդ
այնոսիկ՝ որք թերագոյնք են 'ի հա-
ւատս դաւանութե. այլ 'ի յազգէ
մինչև յազգ զքեզ ծանեայ հարցն
մերոց ա̅ծ. և ճանաչեմ ա̅ծ աբրա-
համու և ա̅ծ իսահակայ և ա̅ծ յա-
կոբայ. և աղաչեմ՝ զի մի՛ ընդ ան-
մաքուր ապաշխարօղս համարեսցիս
զմերձ կալս իմ առաջի քո :

 Դպիր

Դպիրքն՝ Մարմին տէրունական է":

Ք̃ի ա̃յ տէրունական մարմնոյդ և փրկական արեանդ առաջի՝ հըրեշտակային զօրութիւնքն յաներևոյթս երգեն, ո̃վ քեզ վայելէ՝ զարմացութի̃ տ̃նդ զօրութեանց. և որ զիմ նուաստութիւնս արժանաւորեցեր փառաբանիչ լինել, ընդ նոսին նուագելով, ս̃բ տ̃ր՝ ս̃բ տ̃ր՝ ս̃բ տ̃ր. և որդի ա̃յ և տ̃ր զօրութեանց քեզ փառք յաւիտեանս, ամէն.

Սարկաւագն՝ Եւ ևս խաղաղութե̃":

Խաղաղութեանց տուող ք̃ս ա̃ծ՝ անկանիմ յաղօթս առաջի ս̃բ սեղանոյդ ա̃յ. և աղաչեմ զքեզ ահիւ մեծաւ, ոչ խղճիւ գայթակղելով, ոչ սրտիւ խորամանկելով, ոչ պատրանօք խաբողին, և ոչ երկմիտ և թերի հաւատով. այլ աղաչեմ՝ յաղթեա՛ խաբողին, և պահեա՛ յուղիղ



փառս,

վարս , 'ի պարզ միտս , և միամիտ
սրտիւ ունիլ զկատարելապէս հա-
ւատս հատուցանել զփոխարէն սի-
րոյ քոյ ։ Շնորհեա ինձ տէր ա-
ռաւելուլ 'ի յիմ գործս բարութե̃ .
անկեալ կամ յաղօթս առաջի սր̃բ
սեղանոյդ ա̃յ իմոյ . և խնդրեմ գտա-
նել զողորմութի̃ քո 'ի մեծի աւուր
յայտնութե̃ քոյ , յ̃ս ք̃ս փրկիչ իմ
կեցո և ողորմեա ։

Քահանայն 'ի ծածուկ՝ Տ̃ր ա̃ծ զօրութե̃ց և՛՛ ։

Անգաւոր յաւիտենից՝ քո են
ա̃մ՝ արարածք և զօրութի̃ք . և ըզ-
մեր հողեղէն նուաստութի̃ս սիրեցեր
մարդասիրութե̃դ . և խոնարհեցար
'ի մեր մարդկային սպասաւորել̃ն ։
Աղաչեմ զքեզ տ̃ր՝ զի և ինձ լիցի
'ի բժշկութի̃ շնորհօք մարդասիրիդ-
ա̃յ և տ̃ն իմոյ յի̃ ք̃ի . ընդ որում
քեզ հօր և հոգւոյդ սրբոյ փառք
յաւիտեանս , ամէն ։

Սարկաւագն՝ Ողջոյն տուք միմեանց"։

Մերձ առ դուռն կենաց անկեալ կամ առաջի տն̄ իմոյ աղօթելով և աղաչեմ արժանաւորեալ ըն-կէ՛ր ա̄ծային խորհրդոյս։

Սարկաւագն՝ Ահիւ կացցուք երկիւղիւ"

Մե՛ծ է ահ և երկիւղ քո 'ի վ̄ր իմ շնորհեալ բարուոք զգուշանալ ինձ առ քեզ՝ տ̄ր իմ և ա̄ծ։

Սարկաւագն՝ Պատարագ քս̄ մատչի"։

Քրիստոս գառն ա̄յ՝ որ մատչիս պատարագ վ̄ն փրկութե̄ մերոյ. դու ես ողորմութի̄ և պատարագ խաղաղութե̄, և արժանի օրհնութե̄։

Քահանայն՝ Շնորհք՝ սէր՝ և ա̄ծային"։

Հայր և որդի և ս̄բ հոգի՝ հանգո 'ի վերայ իմ զշնորհս և զսէր քո ա̄ծային զօրութեանդ՝ զոր ետուր մեզ պատարագել 'ի քահանայես,


հա

հատո՛ զփոխարէն ընդ հոգւոյս մր՟ ։

Մաղթանաւքն՝ Զդրունս՝ զդրունս իմ՟" ։

Զձ՛ իմ առ քեզ ՚ի վեր ընծայեցից
ըզմիտս իմ սրբութը՟ ած՟ային
երկիւղիւդ . և առ քեզ ունիմ
զայս իմ տէր ամենակալ ։

Մաղթանաւքն՝ Ես գոհայարուք զո՟նէ" ։

Գոհանամ արժանաւորապէս բո-
լորովսրտիւ իմով զմխիթարիչ
սբ՟ հոգւոյդ ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Արժան է սուրգա" ։

Գիտեմ տէր՝ վասն զի ոչ բաւէ
հանդուրժել և կալ առաջի
քո երամ դասուց հրեշտակաց ՚ի
լուսափայլ շնորհաց ած՟ուեդ . ո՛վ
տր՟ ած՟ իմ՝ մեծ են շնորհք ած՟ու-
թեդ քո . զի զմեզ արժանի արա-
րեր զքոյին ած՟ային մարմինդ ՚ի մե-
ջի մերում պատարագ մատուցա-
նել . և հաճելի եղև մեր սպասաւո-

ւորելն ա՟ծուե՟դ քում ընդ սերով
բէիցն և քերովբէիցն միաձայն հա-
մարձակելով և ընդ նոսին ասելով.
Ս՟բ ս՟բ ս՟բ տ՟ր զօրուե՟ց՝ լի են եր
կինք և երկիր փառօք քո:

Քահանայն 'ի ծածուկ՝ Ս՟բ ս՟բ՝ ս՟բ ես ճըշ-
մարտապէս և":

Օրհնեմք զքեզ ա՟ծ հայր ընդ
որդւոյդ միածնի և ազատիչ ս՟բ
հոգւոյդ, որ ոչ անտես արարեր
զպարտեալսն 'ի ձեռաց մահու ըզ
նախնի հայրն մեր. և զա՟մենեանս,
զորս քեզ յորդեգրութ՟ի կոչեցեր
մկրտուե՟ ս՟բ աւազանին. և վ՟ս մե-
րոյ փրկուե՟ առաքեցեր զորդին
ս՟բ մարմնանալ 'ի ս՟բ կուսէն, բառ-
նալով զդատապարտութ՟ի յանցանաց
նախամօրն մերոյ, որ վասն մեր 'ի
մարդոյս ։ զչարչարելըն մարդապէս
կրեաց և զմեռանելըն կամաւ հօրդ-
յանձն էառ: Զքեզ որդի ա՟յ

 փա

փառաւորեմ , որ ետուր մեզ հա-
ւատացելոցս 'ի մխիթարութի ընդ-
նըջ մարմնոյ քում և ընդ պատուա-
կան արեանդ զհացն կենաց , և
զբաժակն փրկութե 'ի մաքրութիւն .
աղաչեմ զքեզ տ՟ր՝ արժանաւորեա
զիս զանարժանս լինել տաճար
մարմնոյդ սրբութե , և բաժակի
սրբոյ արեանդ ընդունարան :
Յայտնի է տէր՝ զի ոչ կարէ կեալ
առանձին քոյ երկինք երկնայնոց , և
երկիրս երկրայնոց . այլ վ՟ զի քո
եղև կամքդ :

Քահանայն՝ Առէք կերէք" . և Արբէք ի
սմանէ" :

Տ՟Ր մարդասէր՝ որ առաքեցեր
զորդիդ քո , և նորին ա՟ծայինն
կարողութե՟ն զհայրական գթու-
թե քո ծանեաք . վ՟ զի ա՟ծապէս էր
խաչիլն կամօք վ՟ մեր : այնպէս
ժուժկալութի երեքօրեայ թաղ-
մանն ,

ման , և երանաւէտ յարութին ,
և ածային համբարձումն փառօք
հօրդ , և ընդ աջմէ քումմէ նստիլն .
զորս հաւատամ և երկիր պագանեմ ։

*Քահանայն՝ ի ծածուկ՝ Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ" ։*

Զքեզ քս որդի այ՝ յանարատ
կուսէն ծնեալ հաւատամ . և
միւսանգամ գալստեանդ ակն ունիմ . և զքեզ փառաւորելով օրհնեմ յաւիտենայնի օրհնեալ ։

*Քահանայն՝ ի ծածուկ՝ Զքեզ արդարև տէր ած մեր գովեմք , և" ։*

Ո՛ր՝ մեծ և ահաւո՛ր է խորհուրդս
այս խոնարհութեդ քում . օրհնեմք զքեզ . զի սովաւ զմեզ զունայնացեալսս ոչ անտես արարեր .
այլ սեփհականեցեր . և զքեզ տէր
ած գովեմք և փառաւորեմք յաւիտեանս , ամէն ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Երկիր պագանեմք՝
և աղաչեմք՝ և խնդրեմք ՚ի՛՛ ։

Յիշեա՛ Տէ՛ր՝ զի դու միայն ես մաքուր ՚ի մեղաց անարատ և անապական հոգլի տ̃յ ։ քանզի ա̃մքեան ՚ի սաստէ քումմէ ո̃ղ մնմ ՚ի հուր հալիմք ։ և ունիմք զքեզ միջնորդ և վասն մեր բարեխօս և պատարագիչ փրկական մարմնոյ և արեան փառակցին քում որդւոյ՝ ընդ ձեռամբ սուրբ քահանայիս ։

Աղաչեմք զքեզ տէ՛ր, զի մարդասիրութե̃ քո արժանաւորեցեր հանգուցանել ՚ի վե̃ սորա զշնորհս հոգւոյդ ս̃բյ ։ վ̃ զի մեր ա̃մ հաւատացելոցս ՚ի քեզ՝ յիւրաքանչիւր կերպս և ՚ի կարիս՝ որք կենդանիքս եմք այժմ, և որք հանգուցեալքն են ՚ի քեզ, ընդ հանուր ամենեքեանս սորին պատարագչութե̃ն հաստատեալ կամք ՚ի յոյս և ՚ի հաւատս մեր ։


Քա

Քահանայն՝ Ընդ որս և մեզ այց արա″։

Աղաչեմ՝ Ներեա՛ Տ՛ր, ա՛յց արա և ինձ մեղուցելոյս. որպէս զի լուացայց ՚ի մեղաց յառաջ քան զելանելն իմ յաստեացս և այլ ոչ ևս դարձայց։

Քահանայն՝ Ածածնին սբ կուսին և յով″։

՚Ի սբ պատարագիս յիշատակեսցի ամենասուրբ մայրն Այ. և ամենագովելի մկրտիչն. և նախավկայն քո. աղաչեմ յիշեա՛ Քս Ած և զիս զանարժանս ննջեցելովք իմովք և ողորմեա՛ ինձ։

Սարկաւագն՝ Առաքելոց սբ մարգարէ″։

Յիշատակաւ սբ առաքելոցն՝ որք դարձուցին զաշխարհս ՚ի կռոցն ՚ի պաշտելութէ յԱծ գիտութի, աղաչեմ յիշեա՛ զիս զանարժանս ննջեցելովք իմովք։

Սարկաւագն՝ Առաջնորդացն մերոց և″։

Ընդ առաջնորդացն և մերոց հայ-



րա

րապետացն՝ և որք զմեզ լուսաւո-
րեցին ՚ի հաւատս ս՟բս, յիշատա-
կաւ նոցին աղաչեմ՝ յիշեա՛ և զիս
տէ՛ր զանարժանս ննջեցելովք ի-
մովք ՚ի ս՟բ պատարագս.

Սարկաւագն՝ Միանձնացելոց ս՟րց ա՟.

Աղաչեմ զքեզ տ՟ր՝ աղօթիւք ս՟րց միանձանց ճգնաւորացն, և որոց նոցա աշակերտեցան. ս՟բ պատարագիս յիշատակաւն զանարժանս ննջեցելովք իմովք յիշեա՛.

Սարկաւագն՝ Թագաւորաց հաւատացե՟.

Ընդ որում յիշատակի՛ ս՟բ պատարագս զթագաւորսն և զհաւատացեալ իշխանսն, աղաչեմ և զանարժանս իմովք ննջեցելովքս յիշեսցես ողորմութ՟բ քով.

Սարկաւագն՝ Ընդ հանուր ա՟մ հաւատա՟.

Տէ՛ր ա՟ծ՝ յուսոյ մեր ակն ունիմք
՚ի

՚ի շնորհս սուրբ պատարագիս ․ զի տուեալ եղիցի յիշատակութ͞ի ընդ հանուր հաւատացելոց ՚ի քեզ ․ և ո՛չ անտես առնելով զարս և զկանայս , զծերս և զմանկունս , և որք ՚ի չափ հասակի առ քեզ են հանգուցելք ․ Աղաչեմ զքեզ ք՛ս ա͞ծ , զի և ինձ անարժանիս՝ և ա͞մ հաւատացեալ ննջեցելոցն ս͞բ պատարագս եղիցի յիշատակ ․ տէ՛ր ա͞ծ կեցո՛ և ողորմեա՛ ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Յիշեա՛ տ՛ր և ա՞ ։

Ա͞Ծ յաւիտենական՝ աղաչեմ զքեզ յերեսս անկեալ մաղթանօք ․ զի շնորհօք ողորմութե͞դ քո պահեսցես անշարժ հաստատութ͞բ զբնակարան երկնաւոր զօրութ͞եցդ՝ զտեղի ապաստանիս զո͞ր և զառաքելաշնորհ կաթուղիկէ եկեղեցիս , եպիսկոպոսապետօք և եպիսկոպոսօք , քահա-

Նայիւք և սարկաւագօք , և զիմ ժողովուրդն , ամէն :

Սարկաւագն՝ Գոհութիւն և փառաբանութիւն՛՛ :

Քեզ Տէր իմոյ տաց զանչափ գոհութիւն և զփառաբանութիւն , որ արժանաւորեցեր զմեզ սրբոյ պատարագիս : Արդ Տէր՝ որ ՚ի յերկնից իջեր ՚ի վերայ երկրիս , խնդրելով զկորուսեալ և զմոլորեալ ոչխարս . վասն զի դու ես հովիւ բարի՝ որ եդեր զանձն քո ՚ի վերայ բանաւոր հօտիս . և յաշխարհ եկիր՝ զի զմեղաւորս կեցուսցես սրբութեամբ . որ և առաջինն ես եմ կորուսեալ . ողորմեա՛ ողորմած և յարարածս քո գթա՛ գըթասէր . ողորմեա՛ և ստեղծուածոյ ձեռին քոյ , և ծայրապետիս մեր ( այս անուն ). կեալ ողջ վայելէ հայրապետաց սրբոց :

Ընդ նմին պարգևեա՛ շնորհս քա-



հա

հանայից՝ որք այժմ սատ , և ընդ-
ամենայն տիեզերս սրբոյ պատարա
գի մատուցանօղք են ։

Դարձեալ աղաչեմք զքեզ տ՛ր · զի
տացես յաղթութիւն թագաւորաց
քրիստոնէից՝ կալ ՚ի պատերազմի
ընդդէմ հակառակի խաչին քո ։
Դարձեալ աղաչեմ՝ զքեզ տ՛ր եր-
րորդութի , վ՛ն ամ հաւատացելոց
ննջեցելոց · առաւելապէս և վասն
թագաւորաց մերոց , որք վերստին
հաստատեցին զազգս հայոց · այն-
պէս և զիս զանարժանս այժմ , մա-
նաւանդ և զննջեցեալսն մեր , գը-
թալով փրկեսցես · հանգո՛ քո և
ողորմեա՛ց ամի ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Յիշեա՛ տ՛ր և ա՛ ։

Աղաչեմ , յիշեա՛ տ՛ր և ողորմեա՛ց
այնոցիկ՝ վասն որոց ն՛ք պատա-
րագս մատչի · և մեզ ամենեցուն


գաս

գտանել զհոգևոր պէտս և զմաք-
րութիւն մարմնոյ ։

Աղաչեմ, հա՛ն յինէն զխիղճ քարե-
ղէն ․ և շնորհեա՛ աստուածեղէն լի-
նիլ ինձ առ պէտս նրյ եկեղեցւոյ
քոյ, տալ և աղքատաց վն սիրոյ՝ և
զհարկաւորայատիկն առից ․ հանգո՛
և զննջեցեալսն մեր, վն զի ՚ի քեզ
յանձին արարեալք յիշատակօք ․ և
քեզ փառք յաւիտեանս, ամէն ։

Քահանայն՝ Եւ եղիցի ողորմութի մեծիս" ։

Ողորմեալ ես քս ած մեր, որ ար-
ժանաւորեցեր զմեզ շնորհաց և
ողորմութե քում, պարգևել մեզ սբ
քահանայիւս ։ Ա՛ռ որոյ՝ զքեզ ընդ-
հօր և սբ հոգւոյդ փառաւորես-
ցուք, այժմ և յաւիտեանս, ամէն ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Աձ ողորմութե և
հայր ողորմութե" ։

Տէր իմ և արարիչ՝ որ ոչ գարշե-

ցար 'ի մէնջ կոչել զմեզ յորդեգ-
րութե̃ հօրդ երկնաւորի · և մեք
այսուհետև համարձակեցաք հայր
ասել · Թէպէտ և ոչ եմք արժանի :
Բայց սորա՝ այժմ սկսայց խօսիլ
առ տ̃ր իմ · քանզի ես հող եմ և
մոխիր իսկ , որդն եմ և ոչ եմ մարդ ,
նախատինք մարդկան և արհամար-
հանք ժողովրդոց · տուր ինձ բան՝
որ բանայ զբերան իմ · զի 'ի քէն են
ա̃մ տուրք բարեաց , և ա̃մ պարգևք
կատարեալք 'ի վերուստ իջեալ 'ի
հօրէն լուսոյ : Պաղատիմ անարժա-
նապէս և աղաչեմ աղերսանօք , զի
մի' դարձայց տառապանօք · այլ
հանդիպիլ արժանաւորեցայց , յոր
յուսամ · և այսպէս եկից ուրախու-
թե̃ և հաստատեալ սրտիւ իմով առ
քեզ : Ողորմեա՛ ինձ տ̃ ըստ մեծի
ողորմութե̃ քում , զի 'ի քեզ յուսա-
ցաւ անձն իմ · ողորմեա՛ ինձ տ̃ր զի

հիւանդ եմ ես, ո՛վ բժիշկ հոգւոց և մարմնոց՝ ահա մերձ կամ ահաւոր բեմիդ քո . բուռն հարեալ զանարատ ոտից քոց, այսպէս պաղատիմ և աղաչեմ հանդերձ սրտիւ բեկելով և խոնարհութբ . քաւեա՛ զիս մեղաւորս . թողութի արա՛ ինձ անպիտանիս և տառապելոյս . նայեա՛ց 'ի սբ բնակութէ քումմէ 'ի վերայ իմ՝ եղկելոյս ։

Քահանայն՝ Եւ տո՛ւր մեզ համարձակիւ″ ։

Ամենակալ ած՝ և ամ գոյիցս արարիչ, որ զայս հրամայեցեր որդւով քով ուսանիլ մեզ աղօթելով առ հայրդ . ո՛չ առաւելաբանել իբրև զհեթանոսս , այլ ասեմք . Հա՛յր մեր որ յերկինս . ս՛բ եղիցի անուն քո . եկեսցէ՛ արքայութի քո . եղիցին կամք քո որպս յերկինս և յերկրի . զհաց մեր հանապազորդ

տուր մեզ այսօր · Թող մեզ զպարտիս մեր՝ ոպ՟ և մեք թողումք մերոց պարտապանաց · և մի՛ տանիր զմեզ ՚ի փորձութ՟ի · այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ · զի քո՛ է արքայութ՟ի և զօրութ՟ի և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Քահանայն ՚ի ծածուկ՝ Տէր տերանց ած՟ աստուածոց":

Յամ՟ի տ՟՛ր մեր յո՟ քո՟՝ զքեզ աղաչեմ· մի՛ տա՛ր զիս ՚ի փորձութ՟ի և մի՛ ՚ի դատապարտութ՟ի · այլ ողորմեա՛ և փրկեա՛ և ապրեցո՛ յա՟մ չարեաց · վն՟ զի քո է արքայութ՟ի և փառք յաւիտեանս, ամէն:

Քահանայն ՚ի ծածուկ՝ Որ աղբիւրդ ես կենաց և բղխման":

Բղխեա՛ ծարաւելոյս ՚ի շնորհաց տ՟ե հոգւոյդ · վն՟ զի քո առաջի անկեալ երկիր պագանեմ արժանաւորիլ ած՟ային լուսոյդ:

Քահանայն՝ Քրիստոսիւ Յիսուսիւ տէ՟"։

Եւ մի որդւոյ ա՟յ տացուք փառք տեառնդ մերոյ այժմ և յաւիտեանս։

Սարկաւագն՝ Պրոսխումէ։

Խոստովանիմ և հաւատամ զի դու ես որդի ա՟յ, որ բարձեր զմեղս աշխարհի · դու ես միայն ս՟բ · դու ես միայն տ՟ր իմ յ՟ս ք՟ս։

Քահանայն՝ Օրհնեալ հայր ս՟բ ա՟ծ"։

Օրհնեմ զքեզ հա՛յր ս՟բ ա՟ծ ճշմարիտ · և հաւատամ ընդ որդւոյ և ընդ ս՟բ հոգւոյդ ։

Քահանայն՝ Օրհնեալ որդիդ ս՟բ ա՟ծ"։

Օրհնեմ զքեզ ո՛րդի ս՟բ ա՟ծ ճշմարիտ · և հաւատամ ընդ հօր և ընդ հոգւոյն ս՟բյ ։

Քահանայն՝ Օրհնեալ հոգիդ ս՟բ ա՟ծ"։

Օրհնեմ զքեզ հո՛գի ս՟բ ա՟ծ ճշ



մա

մարիտ և հաւատամ ընդ հօր և ընդ որդւոյ ։

Խոստովանիմ զերրորդութիւնդ անբաժանելի և զմիասնական ա̃ծութիւնդ • ամէն ։

Քահանայն 'ի ծածուկ՝ Նայեա՛ց տէր մեր յ̃ն ք̃ն յերկնից"։

Որ 'ի հօրէ ոչ մեկնեցար որդիդ ա̃յ • այժմ է՛ 'ի միջի մերում շնորհօք ս̃բ հոգւոյդ • արժանաւորեա՛ և զիս զանարժանս՝ գտանել ողորմութի̃ 'ի քէն ։

Քահանայն 'ի ծածուկ՝ Տ̃ր ա̃ծ մեր՝ որ կոչեցեր զմեզ յանուն"։

Ա̃ծ յաւիտենից • որ շնորհիւ ս̃բ. աւազանին 'ի քրիստոնէութի̃ կոչեցայ • և արժանի եղէ տեսանել զպատկերդ փրկական • վ̃ն զի յանձառելի միու̃եդ ս̃բյ երրորդուեդ խոնարհեցար 'ի մարդկեղէն բնու-

թիս մեր և մարմին ստացար յանա-
րատ կուսէն մարիամայ վն փրկու-
թե մերոյ 'ի յանցանաց . և ետուր
մեզ մխիթարութի ։ Եւ ոչ առեր
հաց և գինի՝ յածային մարմին և յա-
րիւն յօրինեցեր . և ետուր քոյին
գնեալ արեամբդ հաւատացել ծա-
ռայիցդ , յիշատակ քեզ միայնոյ , և
փրկութե մերոյ ։ Եւ ես մեղաւորս
արտասուալից հառաչմամբ գոչե-
լով աղաղակեմ առ Ճշմարիտ նախա-
տիպ և յառաջոյց պատկերդ քո . և
ոչ զի կարօղ ես տր՝ փրկեա զիս ։

Քահանայն՝ 'ի սուրբ 'ի սբ պատուական
մարմնոյ և" ։

Սբ սբ սբ է մարմինդ տէրունա-
կան . որ վն մեր իջեր յերկնից
և բաշխիս 'ի մէջի մերում , զքեզ
գիտեմ կենանք իմ և յոյս յարութե .
դու քաւիչ մեղաց իմոց և մաքրութե
յանցանաց . և քեզ վայելէ երկնա-
ւոր

ւոր Թագաւորին ամ քաղցր սաղ-
մոսերգութք և հոգևոր պաշտօնք

Դպիրքն՝ Քն պատարագեալ բաշ":

Ո՛վ անբաւ բարեաց տեառնդ,
անկեալ երկրպագանեմ։ Ո՛չ զի
սոսկալի է խորհուրդ որդւոյդ այ,
որ այսօր պատարագեցար 'ի միջի
մերում. և զմարմին քո բաշխելով
ետուր մեզ 'ի կերակուր, և զարիւն
քո սբ նոյնպէս ցօղեցեր 'ի մեզ։
Արժանաւորեա կոչմանս 'ի ճաշա-
կումն աղաչեմ տր. վն զի քաղցր
ես՝ ալէլուիայ. ընդ հրեշտակս քո
օրհնեմք՝ ալէլուիայ. և ընդ ամ քո
զօրութիւնդ՝ ալէլուիայ։

Քահանայն 'ի ծածուկ՝ Հայր մր որ ան-
ուանեցեր":

Օրհնեալ ես Հայր տն մերոյ Յի
քի. որ զմեզ որդիս քո անուա-
նեցեր մկրտութբ սբ աւազանին. և



այժմ

այժմ անկեալ աղաչեմ զքեզ տէ՛ր՝ արժանաւորեա փրկագործ սուրբ խորհրդոյդ, ոչ զի լիցի ինձ 'ի քաւութի․ պարգեւեա 'ի շնորհաց ս՟բ հոգւոյդ հալածել յինէն զխաւար մեղաց․ աղաչեմ տ՟ր՝ ա՟մ կարօտելոց առնել զբարիս․ վասն զի դու ես տ՟ր՝ խոստացար մ՟զ՝ որոց արժանաւորինն, զկեանս․ և ես գոհութ՟ե փառաւորեմ զՀայր և զՈրդի և զս՟բ Հոգիդ, ամէն։

Քահանայն 'ի ծածուկ՝ Հաւատով հաւատամ յամենաս՟բ"։

Ս) Երրորդութ՟իդ և զմիածնութ՟իդ հաւատամ զՀայր և զՈրդի և զս՟բ Հոգիդ, ամէն։ Հաւատով հաւատամ և երկրպագանեմ անմահիդ ա՟յ և արարչիդ ա՟մ եղականացս, որ զպատուական մարմինդ և զարիւնդ ոչ խնայեցեր վ՟ն մերոյ

փրր

փրկութեն․ արա՛ արժանի զանար-ժանս և ողորմեա՛, ամէն։

Սարկաւագն՝ Երկիւղիւ և հաւատով։

Տէ՛ր իմ և Աստուած իմ՝ մի՛ յիշեր զմեղս իմ, զի ոչ եմ բաւական․ ես որպէս զմարդ մեղայ, և դու Աստուած ես թողութիւն շնորհեա՛։

Երէց հաղորդելոյ ասէ։

Բերանս իմ բացի և առի զհոգի․ ՚ի պատուիրանս քո փափաքեցաւ անձն իմ։

Քահանայն՝ Կեցո՛ Տէր զժողովուրդս քո։

Որհնեալ ես Տէր Աստուած ճշմարիտ․ որ արժանի արարեր զիս զանարժանս հաղորդիլ մարմնոյ և արեան քում․ և կեցուցես զիս կեալ ժառանգութեամբ քո․ և զօրութեամբ քո բարձրացոյ ՚ի վերայ թշնամեաց իմոց․ լցոյց ՚ի բարութենէդ քումմէ Տէր ճաշակ-

մամբդ քոյ սրբոյ · փառք ՚ի բար-
ձունս կերակրողիդ Այ · և ակն ու-
նիմ, զի և հանապազ հոգևոր օրհ-
նութեամբ կերակրես զմեզ · և քեզ
Ք՚ս Ած՝ փառք յաւիտեանս, ամէն ։

Սարկաւագն՝ Եւ ևս հաւատով ընկալեալք" ։

Մեք՝ որք ընկալաք արժանաւո-
րապէս զանմահ և զանապական
խորհուրդ սրբոյ պատարագիս՝ ըզ-
տեառնէդ մերմէ Յսէ Քսէ գոհա-
նամք և փառաւորեմք ։

Քահանայն ՚ի ծածուկ՝ Գոհանամք զքէն
Ք՚ս Թագաւոր" ։

Ք՚ս Ած՝ զքէն գոհանամ, որ
արժանաւորեցեր զիս զանար-
ժանս այս մեծի շնորհացս · այլ ևս
աղաչեմ զքեզ՝ զի սովաւ պահես-
ցես զիս աներկիւղ յամենայն կը-
րից բանսարկուին ։

Հովիւ բարի՝ որ վասն հօտիդ քոյ
զմահ

զմահ ճաշակեցեր, և ոչ կամեցար լուծանիլ 'ի հօտէդ քումմէ. այլ արժանի արարեր քեզ հետևելոյ ա՟ծ իմ և տ՟ր յս՟ քս՟՝ քեզ փառք յաւիտեանս, ամէն:

Քահանայն՝ Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհ՟:

Օրհնեմք զքեզ ք՟ս ա՟ծ, և յուսացեալ կամք 'ի քեզ. զի և զմեզ կեցուսցես փառաւորել զժառանգութիւն քո. պահեա՛ և հաստատեա՛ զսէր եկեղեցւոյ քոյ ս՟րբ, կատարել զլրումն ողջունի քոյ. աղաչեմք՝ և զմեզ փառաւորեա՛ յա՟ծային զօրութենէդ քումմէ. մի՛ թողուր զմեզ տէ՛ր, աղաչեմք զքեզ՝ տո՛ւր զքո խաղաղութիդ ա՟մ եկեղեցեաց քոց, և աշխարհի, և քահանայից, և մերոյ թագաւորիս, և ա՟մ թագաւորաց քրիստոնէից և զինուորեալ մանկանց նոցա, և ա՟մ ժողովրդեանս:

Ս՟ու զի տ՟ամ բարի և պարգև ՚ի հօ-
րէ ա՟յ ՚ի քեզ կատարեալ հանգեաւ
որդի ա՟յ ք՟ս տ՟ծ, քեզ փառք այժմ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Քահանայն՝ Կատարումն օրինաց և մար՟ :

Բ՟ն որդի ա՟յ՝ որ կատարեցեր զօ-
րէնս, և լցեր զա՟մ ասացեալս ՚ի
մարգարէից. լնլով զքոյին հայ-
րական տնօրէնութիւն, լից և զմեզ
հոգւովդ քով սրբով, և քեզ փառք
յաւիտեանս, ամէն:

Աղօթք սրբոյն Յովհաննու դաւնեցւոյն
ասացեալ առ տէրն մեր յ՟ս ք՟ս ՚ի ժամ նը
պատարագին:

Գառն ա՟յ տէր իմ և տ՟ծ յ՟ս
ք՟ս, որ զենար ՚ի վ՟ր խաչին
և բարձեր զմեղս ա՟շ՟ի: Մեղուցեալ
ծառայս և ծանրաբեռնեալս յան-
ցանօք մեղաց անկեալ աղաչեմ ըզ-

քեզ տէր իմ և Ա՟Ծ իմ. Ողորմեա՛ ինձ որ՟պ ողորմեցար համօրէն ա՟մ աշխարհի. զի դու ես լոյս և լոյս աշխարհի, ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք։

Օ՛ մահացեալս մեղօք և զանօրինեալս յանցանօք՝ մի՛ անտես առներ տ՟ր իմ. այլ ողորմեա՛ ինձ վ՟ս ա՟մ անօրինական կրիցդ՝ որոց տարար համբերութ՟բ բազմաւ։

Յիշեա՛ ամենակեցոյց տէր՝ զիջումն քո 'ի հայրական ծոցոյ, և ըզ մարմնալն 'ի ս՟բ կուսէն մարիամայ։ Յիշեա՛ ամենօրհնեալ տ՟ր՝ զշրջիլն քո ո՟պ զմարդ 'ի մէջ մեղաւորացս մարդկան։ Յիշեա՛ ամենեցունց ս՟բ տէր՝ զմկրտիլն քո 'ի յորդանան 'ի յովհաննէ։

Յիշեա՛ ամենապէտ տ՟ր՝ զդարա-վանսն 'ի դպրացն, և զփորձանսն 'ի փարիսեցւոց։ Յիշեա՛ յաւաջա-

 տես

տես տ̄ր՝ զմտանելն 'ի յուդայէ, և զքամահելն 'ի քահանայից։ Յիշեա՛ ամենօրհնեալ տէր՝ զըմբռնելն 'ի պարտիզին, և զձեռնակապելն 'ի խուժանէն։

Յիշեա՛ ամենակարող տ̄ր՝ զկալն առաջի կայիափայի, և զհարցումն 'ի յաննայէ։ Յիշեա՛ անոխակալ տ̄ր՝ զապտակն և զկառափն 'ի կատաղեացն։ Յիշեա՛ արքայ արքայից՝ զկապանօք կալելն 'ի յատենի պիղատոսի, և զգանելն 'ի նմանէ։

Յիշեա՛ երկայնամիտ տ̄ր՝ զթուքն յեբրայեցւոց, և զծեծն եղեգամբ։ Յիշեա՛ անմոռաց տէր՝ զքղամիթն կարմիր, և զպսակն փշեղէն։ Յիշեա՛ անյիշաչար տէր՝ զժամն զայն՝ յորժամ բարձեր զխաչափայտն կենսաբեր ուսովդ։

Յիշեա՛ բարձրեալ՝ զբարձրանալդ քո 'ի վերայ կենսաբեր ս̄բ

խա

խաչին , և զպարապմնդին բևեռօք։ Յիշեա՛ մի՛ մոռանար զպասքումն ծարաւոյն՝ զճաշակ լեղւոյն և զքա-ցախոյն։ Յիշեա՛ մի՛ մոռանար ըզ ձայնն էլի՛ էլի՛ , և զխոցումն ՚ի զե-նաւորէն։

Յիշեա՛ մի՛ մոռանար զհոսումն վարդագոյն ոչ արեանդ , և զխո-նարհին ածացեալ գլխոյդ։ Յիշեա՛ կենդանին յաւիտենից՝ զթաղումն երեքօրեայ և զյարութիւն ածա-պէս, և զհամբարձումն հրաշափառ։ Յիշեա՛ յիշատակդ յաւիտենից՝ ըզ կորուսեալս․ քանզի վն մեղաւո-րացս յանձն առեր զայս ամ ամե-նագութդ տէր։

Որդ՝ զայս ամ ունիմք առ քեզ միջնորդ և բարեխօս , բազումողորմ ողորմեա՛ ինձ , և թո՛ղ զամ յանցանս իմ․ սրբեա՛ ՚ի մեղաց․ ազատեա՛ յամ վշտաց գեհենոյն․ և տո՛ւր ինձ առ-

 դէ

զի յարքայութե՟ քում. զի դու ես մարդասէր տէր. և քեզ վայելէ փառք իշխանութի՟ և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս, ամէն:

---

Աղօթք և մաղթանք առ ս՟բ Մարիամն ք՟ի. Յորժամ քահանայն բարձրացուցանէ ըզ սկիհն ակներև ժողովրդեանն.

Երկիր պագանեմք քեզ ք՟ս փրկութի՟ աշխարհի, բան հօր, պատարագ կենդանի, ճշմարիտ մարմին անարատ ա՟ծութե, և կատարեալ մարդ. ո՞վ բերանովս խոստովանիմ, նոյնպէս և հոգւովս դաւանեմ և հաւատամ:

Աղաչեմ զքեզ որդի ա՟յ ա՟ծ տ՟ր ամենակալդ՝ շնորհել մեղաց իմոց թողութի՟, և տալ ծառայիս հոգի զգաստութե՟. որ և փրկեցայց քև 'ի յաւիտենական հրոյն վ՟ս կամաւոր

չարչարանաց քոց, զի դու ես ճշմա րիտ գառն այ՝ որ բարձիս 'ի փըրկութի ազգի մարդկան, և բառնաս զմեղս աշխարհի։

Հաւատամ յամենասբ երրորդութի 'ի հայր և յորդի և 'ի սբ հոգին. հաւատով ճաշակեմ զսբ և զկենդանարար մարմինդ քո 'ի քաւութիւն և 'ի թողութի մեղաց իմոց. հաւատով ըմպեմ զանապական և զմեղաքաւիչ արիւնդ քո սբ 'ի թողութի մեղաց իմոց։

## Նախաքան զհաղորդութին։

'Ի խորոց սրտից խօսք ընդ այ. ԻԵ

1 Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զգրութի թուոցս յարմարեցի կական և հեծութի, հաւա-

չանք կողկողագինք , դառնութե՟
լալումն և արտասուաց երգ . գար-
ձեալ սկսայց զճառ պաղատանացս՝
խոստովանօրէն զղջականաբար ,
զգաղտնածածուկն յայտնաբար-
բառ . զի անդրադարձուէ՟ սկըզբ-
նամբն և վերջաւորօքն բառիւք ,
զնոյն համաձևութի ՚ի մի թախանձ-
նակին մաղթանաց հոգեկեցոյցն խո-
նարհութե՝ աստանօր եդից ։

2 Մեղայ մեծիդ բարերարութե՟ ,
անարգս մեղայ . մեղայ ծագ-
մանդ ճառագայթից , խաւարս մե-
ղայ . մեղայ շնորհացդ անբաւ ե-
րախտեաց , արդարև մեղայ . մեղայ
սիրոյդ վերնում գթութե՟ , յայտնա
պէս մեղայ . մեղայ սաստցողիդ յոչ-
էութե՟ , ստուգապէս մեղայ . մե-
ղայ գերունակ գոգոյդ գրկանաց ,
անբաւս մեղայ . մեղայ աննուաղ
լուսոյդ վայելման , նենգօղս մե-

ղայ · մեղայ ճաշակման անճառ-
կենաց, բաղումս մեղայ · մեղայ ան-
հաս պարգևացդ քոց, հանապազ
մեղայ · մեղայ գովեալ մարմնոյդ քո,
մահուչափ մեղայ · մեղայ պաշտելի
արեան արարչիդ, խնկապէս մեղայ։

Ոհ արդարև օրհնեալ է հա-
ուած բանի յուսադրական սրտի
այսր մեղայի · սոյն սա՝ պատուելի
աւանդ · անմոռաց պատուէր · հայ-
րենեացն տուր · նախահարցն օրէն ·
համայնից թոշակ · անհերքելի բան ·
զօրաւոր պատասխանի · կենդանու-
թե͞ կամուրջ · անխորժելի վերնոյն ·
սիրելի ք͞եց · անխզելի կապ · հրա-
շալի բարբառ · անշրջելի պատճառ ·
բաղձալի աղերս · փափաքելի սե-
ղան · սրտաբեկ հնչումն · անհնա-
րից ճարակ · կարծրութե͞ փանիչ ·
ա͞ծապաշտից սահման · հեթանոսաց
գիրք · վաղնջուց կանոն · քրիստո-

նէից հարազատ · արարչութեն յաղ-
թօղ · անջրպետ հզօր · խորոց ահա-
ւոր · արուեստ բարձրութե · խորութե
անչափ · հիացման տեսիլ · խորհուրդ-
կնքեալ , ընդ որ չիք ումեք անցա-
նել , եթէ ոչ անըմբռնելի մտաց
արագման զատ ծանիցէ ։ Զայն
բարեպատեհ հրաշափառական , որ
ոչ յիշատակեցաւ ՚ի վերջին դա-
տակնիք դասուն լծելոյ · գուցէ
առ նմին խղեալ համառօտ զվեր-
ժակն իրաւանց մահուն հասելոյ ,
յորմէ ընտրութեին ապագործ եղ-
եալ , զահմանն յաւիտենական
քակտեսցէ ։ Օ արդ փառաց մե-
ծութե , որով նոյն ինքն ա͞ծութին
պսակեալ բարգաւաճի ։ Քանզի
ո՛վ որք դիմեալ կալաւ զեղջերաց
սեղանոյ այսր սրբութե , և ոչ առ-
ժամայն պրծեալ ՚ի պատժոց անա-
րատ գտաւ ։ Իսկ եթէ աքար զար-
մեան ·

մեան , և սաւուղ կիսեան , և յու-
դա սիմոնեան՝ ասելով զայն ոչ ար-
դարացան , և ես վկայեմ՝ իրաւամբք
խոստովանեալ զայս պայման բանի ,
զի՝ ակամայից բռնադատելոց ոչ է
կատարեալ սէր , ուստի և ոչ բո-
վանդակապէս փրկութիւն ։ Իսկ ես
կամաւ համբուրեմ՝ դարձեալ կրկ-
նելով զերջանիկ բանիդ զմկրտու-
թեան հարազատս ։

3 Մ՝եղայ երախտեացդ մոռացու-
թեն , վերստին մեղայ ․ մեղայ
մարմնոյ ձեռն յոգի հարեալ , յի-
մարս մեղայ ․ մեղայ առ կեանադ-
դժրողութեն , իսկ և իսկ մեղայ ․
մեղայ բանիդ ապախտ առնելոյ ,
չարաչար մեղայ ․ մեղայ ՚ի յօր սա-
տակման ինձէն ստիպել , վատթարս
մեղայ ․ մեղայ պարտականս անկեն
դան մահուն , ձաղելիս մեղայ ․
մեղայ անպատկառս քո բարձրութեն ,

տաղտկալիս մեղայ: Վերջին ինձ կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ: զի անդարձս վարատեցայ: զի որդիս Թշնամի գրեցայ: զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ: զի փուշս վարուց դիզի: Եւ ես առ սմին ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի: զի բագին կորուսչին գտայ: Լալ իմն կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունէին առ որ չէմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զլուեալ որմն գարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, ըղձյսս 'ի մուայլ շրջեալ, զգերանակիր ակնս Թշուառացեալ, զճահս փառաց շիջեալ, զա̃միս յա̃մի ա̃մ իրօք վ̃նասակարս, առ անօրինական սրն տէրունականս: առ յայտնուԹ̃ին ա̃ծային: առ երևմունսն արարչագիրս: առ խոնարհուԹ̃ին



սար

տարսափելիս • առ այն զոր տեսի
աչօք իսկ իմովք ։ Առ որ մեծ է
պատասխանատուութիւն , քան առ
համօրէն աւետարանին՝ զարմանս ,
հիացմունս • հոգս հալողականս •
անդաձմունս անհնարաւորս • թուա
կանութիւն՝ մոայց անբարդելիս •
ելմունս անկատարս • իջմունս ան-
հաստատս • յուսահատութիւն յաբ-
մարականս • յանդիմանութիւն պատ-
շաճականս • ձաղանս պատեհագոյնս •
նզովս իրաւացիս • անէծս արժա-
նահատոյցս ։ Արդ այսոքիկ են մե-
ղաւորիս իմ կշտամբութիւք , և ինք-
նահարուած տանջանաւորութ ։
4 Եւ քանզի կարող ես զայս իմ
զպատրաստ թողուլ , և զխայթուածս
մահու բժշկել տէր ողորմութեանց ,
իմ բոլորից , քո թագաւոր՝ բարձ-
րեալ հօր որդի , ստեղծիչ՝ գթած՝
բարերար , օրհնեալ՝ առատ՝ հա-

րուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած,
տեսուչ՝ ձեռնկալ՝ հաստիչ, ապրե-
ցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ, եր-
կայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն,
բժիշկ՝ գովեալ՝ երկնաւոր, անճառ՝
լոյս՝ կեանք, յարութի՝ նորոգու-
թի՝ քաւութի, եթէ հայեսցես մարդա-
սիրութբ, ըստ որում քոյդ են սովո-
րութիք, նայեցեալ 'ի քեզ՝ կողկո-
ղիմ և ես ։ Եթէ լուիցես, հառա-
չեմ. եթէ ունկն մատուցանիցես,
պաղատիմ. եթէ անսայցես, աղեր-
սեմ. եթէ ներեսցես, աղաչեմ.
եթէ առ իս դառնայցես, գոչեմ.
Ապա եթէ անտես առնիցես, կոր-
ծանիմ. իսկ եթէ առ ոտն հարկա-
նիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ
ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ
ահարկու դէմս ցուցանիցես, սա-
տակիմ. իսկ եթէ սաստեսցես, դո-
ղամ. եթէ խեթիւ տեսանես, սոս-
կամ.

կամ. ապա եթէ սաստկանաս, սար-
սափեմ. եթէ հալածես, հեծեմ.
Իսկ եթէ ընդ-վայր հարկանիցես,
հերքիմ. եթէ զբոց վհատուես ոչ
առնցես, տագնապիմ. եթէ խստա-
նաս, փախնում. ապա եթէ սպառ-
նաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես,
քարկոծիմ. ապա եթէ ուժգին
անկնարկես, սուզանիմ. եթէ ոչ
անխնայեսցես, մերժիմ. եթէ կոչես
ցես, խիթամ. իսկ եթէ աչս յա-
ռեսցես, ամաչեմ. եթէ ձայն տա-
ցես, երկնչիմ, զբարեացն պարգե
մատնեալ. զերանութին թողեալ.
զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ.
զաւանդն կենաց մոռացեալ. զհա-
մարձակութեն վստահութի կորու-
սեալ. զստեղծիչդ եւցս բարկացու-
ցեալ. զանձառութի շնորհին ընդ-ոտ
նեալ. զպատուոյն պատկեր այլայ-
լեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մա-



հու

հու հեծութ ցաւոյ մարդասիրեալդ՝
աղխս ժամանեցուսցես տ՛ր յ՛ս ք՛ս՝
պաղդեալն գիր ընանիլ ՚ի յիս ,
եթէ բժշկութի դադարեցուցանէ
զմեղս մեծամեծս . որով ամենա-
ւատ քաղցրութբ պատուսատեալ ՚ի
քեզ , զքոյդ կերպարան լուսոյ նը-
կարեալ յոգի՝ վերստին գտեալ
ընդեցայց քաւեալ , և սրբեղծեալ
կրկին ՚ի փրկութ անմահից կենացն
անախտականաց . և քեզ ընդ հօր
հոգւովդ սրբով փառք յաւի-
տեանս , ամէն :

## Յետ հաղորդութեանն :

՚Ի խորոց սրտից խօսք ընդ ա՛յ . Ե

1 Նու արդ ես երկրածինս մարդ՝
կենցաղականաւ անկայուն
գոյիւ զբաղեալ , և յիմարութբ

պատրողականաւ գինետուս յիմար-
եալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ
միով իւիք ճշմարտեմ: Քանզի ո-
րովք դիմօք վերագրեցելովք նշա-
նակօք պատրաստեցելովք՝ յանդգնե-
ցայց լինել յանդիման քում դա-
տաստանիդ, ո՛վ իրաւադատ ահա-
ւոր անճառ՝ անպատում հզօր Ա՛ծ
բոլորից: Քանզի դասեալ ատեանս
տին ՚ի սոյն զապերախտութ՛ մեղու-
ցեալ անձինս՝ առ քումդ երախ-
տիս, ցուցից զիրաւունս քո մեծ
զօրացեալ, և զանիրաւութ՛ իմ յա-
ւէտ պարտաւորեալ: Մի տարարեր
զիս ՚ի քո պատկեր պանծալի ՚ի
ձեռն վեհիդ տպաւորութեան,
զոհակայս օծանդակելով:

2 Որ արարեցեր բանիւ · փայլե-
ցուցեր փչմամբ · մարդ ճոխացու-
ցեր · խնամոտիւք աճեցուցեր · հան-
ճարով հաստատեցեր · ՚ի շնչականս

 ցըն

ցըն որոշեցեր · հոգւով իմանալեաւ
խառնեցեր · իշխանականին գոյիւ
պճնեցեր ։ Ծնար հայրաբար · սը-
նուցեր դայեկաբէս · տածեր ստա-
ցողաբէս ։ Տնկեցեր զամբարիշտս
'ի քումդ գաւթի · ջրովն կենաց
ոռոգեցեր · աւազանին ցօղով մաք-
րեցեր · կենացն փառակաւ արմատա-
ցուցեր · հացիւդ երկնայնով ջամ-
բեցեր · ա՟ծային արեամբդ արբու-
ցեր · անհպելցն և անհասանելեացն
ըմտանեցուցեր · զաչս երկրեղէն 'ի
քեզ համարձակեցեր · լուսովդ փա-
ռաց վերածածկեցեր · զհողանիւթ
մարմնս անմաքուր ձեռացս 'ի քեզ
մատուցեր · զմոխիրս անարգ մահա-
ցու իւր զնշոյլ լուսոյ յարգեցեր ·
զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝
մարդասիրաբէս և անարժանիս ի-
մոյ անձին կնքեցեր · Ոչ կիզեր ըզ-
բերանս լցեալ նանրութե՟՝ 'ի ժա-
ռան

ուանգակիցն կարդալ զքեզ ․ ո՛չ
կշտամբեցեր զյանդգնեալս՝ ՚ի քո
կցորդութ̅ի ․ ո՛չ ստուերացուցեր
զտեսիլ աչացս՝ ՚ի քում ակնար-
կութ̅ի ․ ո՛չ արգելանաւ կապանաց՝
ընդ մահապարտացն տարագրեցեր ․
ո՛չ խորտակեցեր զդաստակ բազ-
կիս , որ անմաքրապէս առ քեզ
համբառնայր ․ ո՛չ մանրեցեր զոսկոս
խմո՛ց մատանցս՝ ՚ի շօշափելն զբանդ-
կենաց ․ ո՛չ պատեցին զի՛նև մառա-
խուղք՝ ՚ի ձօնելն զքեզ ա՛հաւոր ․
ո՛չ փշրեցեր զպարս ատամանցս՝
յըմբոշխնելն զքեզ ա՛նսահմանելի ․
ո՛չ գնացեր բարկութ̅բ խոտորնակ՝
խոտորնակի ընդ քեզ հետևօղս ,
իբր ընդ վրիպե̅լ տունն իսրայելի ․
Ո՛չ խայտառակեցեր ՚ի հարսնարա-
նիդ՝ զանարժանս քում պարեր-
գութ̅ե ․ ո՛չ ՚ի գձուձ հանդերձին
տեսիլ՝ զանօրինեալս յանդիմանե-
ցեր ․

ցեր • ոչ կապանօք ձեռացս և ո-
տիցս՝ յարտաքին խաւարին հալա-
ծեցեր։

3 ր ()այս տէր մասունս բարեաց՝ և
զներբելոյդ երկայնմտութ ըն-
կալեալ ի.քէն բարերար օրհնեալ,
և յանի միշտ երկայնամիտ, փոխար-
րեցի մնասականս պարտեաց՝ ան-
թիւս և բազմօրինակ անօրէնութս,
ամարմնականաց և անձնականաց՝ ա-
մենակէր բազմածուփ խորհրդոց
յուզմանց երկրաքարշութեանց։
()այսուսիկ քեզ տ'ծ իմ և տր՝ ընդ
այնքանեաց բարեաց փոխաբերեցի·
զայս քեզ՝ ինձէն հատուցի չարիս,
ըստ մոլախնեան յանդիմանութն
առակի, մոռացեալ զիմաստութ՝ և
սիրօղս յիմարութե, ()այնց բար-
եաց երախտեաց կամաւս՝ ընդու-
նայնութե դնացիւք չարաչար ու-
նայնացուցի, զայս լուսաւորութ



շնոր

շնորհաց անճառելեաց՝ ՚ի բարձրելոյդ
խնամոց բարդեցեալ՝ մրրկաւն խե-
լագարութե՛ ցնդեցի։ Եւ թէպէտ
բազում անգամ ծանուցար՝ կար-
կառամամբ ձեռին քո այցելութեան
ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ
ըստ մարգարէին որ զիսրայէլէ ամ-
բաստանութե. եւ թէպէտ խոստացայ
դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, եւ
ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտի
փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւ-
թեցի չարիս. անդստին յոձն առա
ջին մատեայ. փչոցն մեղաց հերկե
ցի զանդաստան սրտիս յորոմանն
արդիւնաւորութի։ Ուռ իս ելանէն
աւածք ծարեալ նբ մարգարէի-
ցըն, քանզի մնայցէր յինէն խաղո-
ղոյ, եւ ես ընդ այնորիկ փուշ շառա
ւիղեցի. դարձայ յանխորժ դառ
նութի՝ պտղոյ այգիս օտարացեալ.
բուռն հարի զանհաստատ հողմոյ,



որովք

որովք մինչ տառապանեալ այսր անդր
տարաբերիմ. ըստ ձայնի երանելոյն
Յոբայ՝ Է ճանապարհ ինձ անդարձ
գնացի. 'ի վ͞ր աւազոյ շինուածս
յիմարութե կառուցի. Այնատարր
հետովք խաբեցայ՝ կենացն անձ-
կալեաց հասանել. փակեցի ինձէն
զելիցն ուղեորութե, բացի կամաւ
զկորստեան խորխորատն։ Խոցի ըղ-
պատուհան լսելեացս իմոց՝ առ բա-
նից կենաց ընդունելութե. կափու-
ցի զաչաց հոգւոյս հայեցուած՝ առ
'ի զկենացն դեղ նկատել. Ոչ ըն-
դոստեայ 'ի թմբրութեց լքմանէ
մտացս՝ 'ի պատգամ փողոյդ ահաւո-
րութե. ոչ զգաստացայ 'ի փողոյ
դուժի՝ հրափորձական աւուրն
ընտրութե. ոչ երբեք զարթեայ 'ի
նիրհմանէ քնոյն մահացուի, որ 'ի
կորուստն հարապետէ. Ոչ ետու
հանդիստ քոյ հոգւոյդ 'ի մարմնե-
ղենս

ղէնս տաղաւարի · ոչ ըստ բնութեն
շնչոյս խառնեցի զմասն շնորհաց
քումդ պարգևի · իմոյս ձեռօք կո-
չեցի կորուստ ըստ առաքողին , ըզ
հոգիս կենդանի մահացուցանել ։
4 Նու զինչ է ինձ սակաւս և նուա
զագոյնս յօդել սահմանս կըս
կծելիս չափաբերականս՝ մինչ ան-
ցեալ է ըստ քանակութիւն՝ և վը-
րիպեալ ըստ բաժնութիւն ․ Որդ
քն է ընձեռել կեանս հոգւով
մեռելոյս , և անոխակալութեամբ
մատչել առ այցելութիւն դատա-
պարտելոյս որդի ոյ կենդանւոյ ·
քեզ փառք յաւիտեանս ,
ամէն ։

## Աղօթք առ Հայրն ա՟ծ։

Փառք քեզ ա՟ծ հայր ամենակալ՝ հզօր և ամ՟ն կարող, որ միայնդ ես և ամենեցուն օգնես երկնաւորաց և երկրաւորաց. և առատապէս լնուս զպէտս ամենեցուն։ Տուր մեզ տ՟ր աղաչեմք զքեզ՝ յաղթել չարին. և մի՛ տար զմեզ 'ի փորձութի՟ն, այլ փրկեա՛ յաներևոյթ գազանէն վ՟ն անուանդ քում՟ ա՟մէն։

## Աղօթք 'ի դէմս Որդւոյ։

Որհնութիւն քեզ որդի ա՟յ տ՟ր մեր յ՟ս ք՟ս՝ որ յայց ելեր մեզ, և եկեր 'ի փրկել զարարածս քո. գթած և մարդասէր տ՟ր՝ զքո տ՟ր անօրէնութիդ առ քեզ բարեխօս ունիմք, զոր կամաւորութե՟ յանձն առեր։ Ծնունդն, զմկրտութի՟ն, զխաչելութի՟ն, զթաղումն, զյարութի՟ն, և զա՟ծային համբարձումն.

մի՛ անտես առնէր զմեզ, զոր գնե-
ցեր պատուական արեամբ քով որդւով։

Աղօթք ՚ի դէմս սրբոյ Հոգւոյն։

Գոհութիւն մատուցանեմք քեզ ս՛ր Հոգի ած ճշմարիտ՝ արեգական արդարութեան, որ ծնար զմեզ վերըստին յարգանդէ սբ աւազանին՝ յորդեգրութիւն հօրն երկնաւորի։ Ծագեա՛ ՚ի սիրտս մեր և լուսաւորեալ ջեռուցո՛ զհոգիս մեր ՚ի սէր սրբութեան վաստակել ՚ի փրկութիւն անձանց մերոց, ՚ի պատիւ և յերկրպագութիւն սբ երրորդութեանդ և միածնութեանդ. այժմ և միշտ և յաւիտեանս։

Աղօթք առ տէր Ած։

Տ՛ր ած իմ՝ որ քննես զսիրտս և զերիկամունս, հայեաց յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և տես զտարակուսեալ անձն եղկելւոյս. ՚ի յանցանաց ազատեա՛ զպարտաւորս, և


՚ի

'ի մեղաց մաքրեա՛ զբազմամեղս։
Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց տ՛ր, և մի՛ ընդ վայր հարկաներ զիս վ՛ն մեղաց իմոց։ Աղաչեմ զքեզ տ՛ր՝ զօր վախճանին իմոյ 'ի պատշաճի արա՛, և զհրեշտակ խաղաղութեան
առաքեա՛ առ ծառայս քո։

Զհոգեվարքն իմ թեթև արա՛, և զհոգիս իմ խաղաղութ՟բ անցո՛ ընդ չարութ՟ի այսոցն՝ որք են 'ի ներքոյ երկնից. խաւարեսցին աչք նց զի մի՛ տեսցեն, և զչարութ՟ի նց կործանեա՛. սաստիկ սաստիւ քո տ՛ր ապառեսցին, ապաւնալիք նոցա
ըմբռնեսցին։

Զարհուրանք նց գանալիցք եղիցին. գնացք նոցա ըմբռնեսցին. բռնութ՟իք նց խափանեսցին. չար խորհուրդք նց տոչորեսցին. տարափք նոցա ջարդեսցին. ջոլիրք նց կոփահարեսցին. կուխք նց ջնջեսցին.

ցին ․ ջանք նց և բանակք բեկցին ։
Զօրքն զարհուրեսցին ․ շշնջմունքն շիջցին ․ պատերազմունքն պարտեսցին ․ յարձակմունքն արձանասցին ․ զէնքն զզուեսցին ․ աղաղակքն աղարտեսցին ․ մեքենայքն մանրեսցին ․ սպառազէնքն սպառեսցին ․ ցասմունքն ցածասցին ․ մեկնազէնքն մոլորեսցին ։
Ամբարտաւանութիւնքն ամաչեսցեն ․ քաջքն քամահեսցին ․ ըմբոստութիւնքն ըմբռնեսցին, և միանգամայն ամ միաբանութիւնք նոցա 'ի սկզբանէ քակտեսցին ․ զի փառաւորեսցի զամենազօր տէրութիւնդ այժմ" ։

Աղօթք առ տր խաչն քի ։

Տէ՛ր յս քս՝ նշանի խաչի քո երկիր պագանեմ, և աղաչեմ վասն զօրութեան քո՝ զոր գործեցեր 'ի սմա ․ զհոգի և զմարմին իմ 'ի մեղաց

և յա՟մ չարեաց պահեա՛ ։ 'ի խոտոր-
մանց և 'ի նենգութենէ թշնամւոյն
փրկեա՛ , և արժանաւորեա՛ յաւիտե-
նական ուրախութեանցն արժանապէս ։
Փ՛րկիչ աշխարհի՝ մի՛ թողուր զիս ։
զի դու իսկ արժանաւորեցեր ել-
եալ քո 'ի խաչ վասն իմ ։ Հովանաս
ցիս և փրկեսցես յաւուր նեղութե՟ ։
Ս՟բ խաչ քո՝ որ քև փրկեալ եմ,
քև լիցի թողութիւն և քաւութի՟
մեղաց իմոց ։ Ս՟բ խաչ՝ ապրեցո՛
զիս վասն ն՟ր որ կախեցաւ զքէն ։
Ս՟բ խաչ՝ պահեա՛ զիս վասն նորա
որ զգեցաւ մարմին և չարչարեցաւ
'ի քեզ ։

Փ՛րկիչ տ՟ր՝ փրկեա՛ զիս վասն զօ-
րութե՟ խաչի քո ։ և յա՟մ չարեաց
պահպանեա՛ ։ Խաչ քո տ՟ր յս՟՝ զոր
ես երկիրպագանեմ, եղիցի ինձ 'ի
փրկութի՟ , կեանք , զէն յաղթութե՟ ,
և օգնականութի՟ այժմ և 'ի հանդեր
ձեալն ։

ձեալն · և քեզ փառք յաւիտեանս ։

Աղօթք առ սբ Ածածինն ։

Ո՛վ ամենասրբուհի Ածածին , պարծանք կուսութեան , վերագպայծառագոյն քան զարեգակն ։ Ո՛վ ջահ փայլուն քան զլուսին և զաստեղս ։ Ո՛վ աթոռ քերովբէական բարձրագոյն քան զերկինս ։ Ո՛վ սերովբէ հողեղէն վեհագոյն քան զհրեշտակս և պատուականագոյն քան զանմարմին դասս երկնաւորաց ։ Ո՛վ պարծանք կուսանաց և փառք ամուսնացելոց ։

Դու ես հարսն անսկզբնականին · դու ես մայր մարմնացելոյ միածնի որդւոյն Այ · դու ես բնակարան հոգւոյն սրբոյ ։

Քև հաճեցաւ Ած ընդ մարդկային բնութիւն՝ որ մեղաւ · քև բացաւ փակեալ դուռն դրախտին ։

 Քև

Ո՛րև օրհնեցաւ երկիր յանիծից
նախահօրն · քև անկեցաւ քաղց-
րութ՟ի և ճշմարտութ՟ի յերկրի ։
Ո՛րև ծանեաք զա՟ծ · քև անուանե-
ցաք քրիստոնեայ · քև ընկալաք
զապաշխարութ՟ի ՚ի թողութ՟ի մեղաց ։
Ո՛րեղ միայն տուաւ համարձակութ՟ի
բարեխօսել վ՟ն ազգի մարդկան ։
Ո՛վ որովայն ա՟ծակրող մայր ա՟ծա-
ծընող ։ Ա՟ծաշօշափ ձեռն · ա՟ծա-
հանգիստ գիրկք · ա՟ծադիտաց բա-
ռինք · ա՟ծաբարձ բազուկք · ա՟ծա-
մերձ բերան · ա՟ծահամբոյր շըր-
թունք · ա՟ծահայեաց աչք · ա՟ծա-
խօս լեզու · ա՟ծընկալ խորան ·
ա՟ծաբնակ տաճար ։
Մ՛ի մոռանար զխոստովանօղս քո ,
որք քև փառաւորեն զհայր և զոր-
դի և զս՟բ հոգին՝ այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից ,
ամէն ։



Աղօթք

## Աղօթք առ երկնային զօրսն ։

Սուրբք և սրբեցեալք յամենասուրբ երրորդութենէն, հոգիք հարկաւորք, գաբրիէլ, միքայէլ, ուրիէլ, ռափայէլ, հրեշտակք, հրեշտակապետք, պետութիւնք, իշխանութիւնք, տէրութիւնք, սերովբէք, քերովբէք, աթոռք, հրեղէնք, բոցեղէնք, լուսեղէնք, և այլ ամենայն դասակարգութիւնքդ երկնաւորք, որոց առաջի անկանիմ և զարդարողին ձերոյ տեառն աստուծոյ երկրպագանեմ. և խնդրեմ ՚ի ձէնջ հայցել ՚ի տեառնէ զթողութիւն յանցանաց և զքաւութիւն մեղաց իմոց. քանզի ձեզ տուեալ է համարձակութիւն վասն բարեխօսութեան ամենայն մեղաւորաց ։

Դուք որ էք՝ և առ ամենասուրբսն մօտակացք. դուք անմարմինք էք և անմեղանչականք, իսկ ես մարմնաւոր

եմ և մեղանչական · դուք անմահ
և՚ի լոյս բնակեալ, իսկ ես մահկա-
նացու և խաւարաւ մեղաց ծած-
կեալ · դուք թեթևընթացք և քան
զմիտս երագունք, իսկ ես ծանրա-
ցեալ մեղօք և զառածեալ յանցանօք։

Ա՟ն որոյ՝ աղաչեմ զձեզ աղաչեցէ՛ք
վ՟ն իմ զ՟տր, և հայցեցէ՛ք զթողուլ
բազում յանցանացս, քանզի յօ-
ժա՛ր է ՚ի փրկութ՟ն կորուսելոյս · մի՛
անփոյթ առնիցէք զխնդիր տարա-
կուսելոյս, այլ միաւորեալ զաղա-
չանս մերուցելոյս ընդ ձեր ամենա-
մաքուր մաղթանացդ՝ մատուցէ՛ք
խնդրողին զկորուսեալս, զի փըր-
կութ՟իւս իմով ուրախութ՟ն արասցէ
ձեզ տ՟ր ՚ի յերկինսդ · և ես ձեր
միջնորդութ՟բ սրբեցայց ՚ի մեղաց
և ազատեալ յա՟մ յանցանաց՝ փա-
ռաւորեցից ընդ ձեզ զամենա՟սբ
երրորդութ՟ին զՀայր և զՈրդի և

 զ՟սբ

ղ՟րբ Հոգի . այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից , ամէն ։

---

Աղօթք Մեսրոպայ վարդապետին վասն ճանապարհի ։

Առաջնորդ կենաց և ճանապարհ ճշմարտութե՟ Տէր մեր Յ՟Ք՟ , որ առաջնորդեցեր յովսեփու յեգիպտոս , և իսրայէլացւոցն ընդ ծով՟ կարմիր , և մովսէսի 'ի լեառն սինէական , և ժողովրդեանն յերկիրն պարգևաց , և կղէօպեանցն ճանապարհակից եղեր յէմաւուս ։

Աղաչեմ զքեզ Տ՟ր՝ առաջնորդեա՛ ինձ և եղբարց իմոց գնալ խաղաղութբ՟ զառաջիկայ ընթացս . փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամեացն . և բարի առաջնորդեա՛ 'ի դէմ եդեալ տեղին . զի դու ես ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք մեր . այժմ և՟ ։

Աղօթք՝ յորժամ յորոգայթ անկանի ոք․ Ասացեալ ս̅ր̅յն Գրիգորի մերոյ Լուսա-ւորչին։

Օրհնեա՛լ է մարդասիրութի̅ն քո տ̅ր իմ և փրկիչ յ̅ս̅ ք̅ս̅, ընդէր լքանես զիս․ դու միայն ես առանց մեղաց․ և անուն քո զանոխակալու-թի̅ւ և զմարդասիրութի̅ւ ցուցանէ․ գթա՛ յիս՝ վասն զի դու ես միայն մարդասէր։ Ապրեցո՛ զիս զանկեալս ՚ի մեղս․ զի դու ես միայն առանց մեղաց։ Հա՛ն զիս ՚ի տղմոյ անօրէ-նութեան իմոյ, զի մի՛ ընկղմեցայց յաւիտեանս յաւիտենից։ Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց․ քանզի ա-հա՛ իբրև զառիւծ գոչէ և մռնչէ կամելով կլանել զիս։

Արդ տ̅ր իմ փայլատակեա՛ զփայլա-տակունս քո և կործանեա՛ զզօրութի̅ նց̅․ երկիցեն և խաւարեսցին յերե-սաց քոց․ քանզի անկա՛ր է և ոչ ունի

զօրութիւն կայ առաջի քո , և
ոչ առաջի երեսաց սիրողաց քոց։
Տեսանեն զզօրութի̃ նշանի խաչի քո
տ̃ր՝ և զարհուրին . և ամաչելով 'ի
բաց հեռանան յայնցանէ՝ որք կար-
դան առ քեզ։
Այժմ տէ՛ր կեցո՛ և ապրեցո՛ զիս,
վ̃ն զի 'ի քեզ ապաւինեցայ . համ 'ի
նեղութե̃ զանձն իմ, զի մի՛ խայտա-
կորուսցէ զիս նենգաւորն՝ որ մար-
տընչի ընդ իս ծածուկ հնարիւք։
Որ խորհրդոց ես տ̃ր , և քննես ըզ
սիրտս և զերիկամունս , սրբեա՛ ըզ
սիրտ իմ և զխորհուրդս 'ի զաղիր և
'ի պիղծ խորհրդոց . զի մի՛ խայտա-
կորեայց 'ի յաւիտենական կորուստն։
Որ կարօղդ ես ամ̃ի , ողորմեա՛ ինձ
ա̃ծ իմ . տուր շնորհ արտասուաց
մեղուցեալ հոգւոյս , ո̃պ զի լուա-
ցից զբազմութի̃ մեղաց . զի ապրեցայց
'ի ձեռաց անողորմ հրեշտակաց՝ որ
 ար

որկանէն զամբարիշտն 'ի հուր գե-
հենին • Երանի թէ լայի հանապազ
աղաչելով զքեզ Տծ, զի մի՛ անար-
ժան գտայց 'ի ժամուն՝ յորժամ
գայցես • և մի՛ լուայց զահաւոր ըղ-
ձայնն զայն, թէ Ե՛րթ 'ի բաց մշակ-
անիրաւութե՛ ոչ գիտեմ ուստի ես :
Ո՛վ բարձրեալ միայն առանց մե-
ղաց, շնորհեա ինձ մեղաւորիս յա-
ւուր յայնմիկ զբազում գթութի
քո • զի մի՛ յայտնեսցին ծածուկ
ամբարշտութիք իմ առաջի տեսողաց
հրեշտակաց և հրեշտակապետաց,
մարգարէից՝ առաքելոց և արդարոց
րբոց : Այլ արարեր զիս զամբա-
րիշտս շնորհօք ողորմութե՛ քո • ըն-
կալ զիս 'ի դրախտն փափկութե՛
ընդ կատարեալ արդարսն • ընկալ
զաղօթս մեղուցեալ ծառայիս քո
բարեխօսութբ ամ՛ցն՝ որք հաճոյ ե-
ղեն քեզ, յ՛ս ք՛ս տր՛ մեր • և քեզ



ընդ

ընդ Հօր և ընդ Հոգւոյդ փառք յա-ւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի բանից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ ընդդիմամարտ գիւտից այս նուագ աղօթից, և դիւասարսուռ ջերմնատագնապ ախտաւորութեց՝ աստուծով փարատիչ։

Տէր՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենաստեղծ՝ անունդ ահաւոր. ձայն սարսափելի. կոչումն ընտա-նի. բան համբուրելի. ազդումն սքանչելի. հրամանն սոսկալի. էուի̅ անքննելի. գոյուի̅ անճառելի. խա-կութի̅ անբաւելի. զօրուի̅ անզննե-լի. կամք ամենաբարի. տէրուի̅ ան-սահմանելի. մեծուի̅ անչափելի. բարձրութի̅ անբովանդակելի. որ-քանութի̅ անկշռելի. առաւելուի̅



ան

անհասանելի · պատճառ որդւոյ
հայրութե՟ն , այլ ո՛չ նախադրութե՟ն ·
քե՝ և ՚ի ձեռն քոյդ անպարագիր
զօրութե՟դ՝ սաստեւ տագնապօղ և
դիւական տենդիս ջերմութե՟ն , որ
սպրդեալ մուծաւ ընդ մեղաց՝ զի
փախիցէ ՚ի մարդոյս , զարհուրեալ
՚ի սխրալի և յանբաւելի արեան վ
տակի՝ գաւինդ երկնաւորի · որով
սրսկեալ միանգամ ՚ի մշտնջենա-
ւորս՝ համայն մաքրեցաք :

6 Եւ արդ՝ յայս պատկառելի խո-
նարհութե՟ն արարչակերտս խոր
հրդոյ , ամաչեսցէ՛ սա՟նյ ՚ի գործս
չարեաց խորոցն հրեշտակաց · տան-
ջեսցի և հալածեսցի , հեռացեալ և
արտաքս աւաքեալ ՚ի չինուածոյ
խորանէ քումդ բնակութե՟՝ յարտա
քին խաւարին : Եւ ջնջեալ մաքրեա՛
զարտասաւս ողբոցս ՚ի դիմաց մե-
րոց , և զհառաչումն ձայնիս հե-

ծու

ծութեն ՚ի սրտից մերոց ։ Եւ յիշա-
տակաւ հարման հեղուսիցն՝ քաղմր
նափուշ տաժանատեսիլ ողբեղա-
հանջից , որով պնդեցաւ միածինդ
քո յաշտարակ խաչին , ցուեսցի
չարին։ Եւ ՚ի կողահերձ սայրասուր
սլաքէ ուժգին բախմանէ , որով
զմէրն մեծ ընկալաւ , խայթա́ռ սա-
տակեսցի սկզբնայար մահուն։ Եւ
զի խոնարհեցայց զգոյլեայն գլուխ՝
յաւանդել զոգին ՚ի ծոց քո՝ բա́րձ-
րեալ , ազատամբութ̄ի անբարի բա-
րուցն բելիարայ՝ ՚ի կոր կործանեա-
ցի , ամ̄ի հեղեալ ՚ի կորուստ ։
Եւ զի ղօղեալ ծածկեցաւ անմահն
ինկու̄ի՝ յորովայնի երկրի , այսու
ամբարձեալն հայրութ̄ի կարծեալ
գուողին՝ ՚ի յատակս մահու դժո-
խոց՝ մթին ստուերին՝ յարուեալ դի-
տեսցէ . և յիշեսցէ զաւաջին հար-
ուածն անբժշկական , որով մահա-

ցաւ դիմամարտութ՟ թիւնից վիշապին՝ կենարարն կրիւք ամենազօրին։ Վասն զի ՚ի փառս քո՝ հայր ողորմութե՟, իբր ՚ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ լինչ սոսկ զօրութեն ունի զմիւսամէն՝ առ մի խորհրդականին խորութե՟, այլ զանըս կիրքն բանդ անձնաւոր՝ ընդ անժամանակդ հօր փառաւորեմք։

Իսկ քեզ միայնոյ ՚ի բ՟ երրորդութեդ, հաւասարապատիւ տէրութեդ, համբուն՝ անբաժին ինքնութեդ՝ օրհնաբանութի, գոհութի, զօրեղութի, և անճառ վայելչութի մեծութե՟, բարեվիճակ հարթութե՟, զուգակշիռ հաւասարութե՟՝ յաւիտեանս, ամէն։

—

՚Ի խորոց սրտից խօսք ընդ այ՟։ Ղ.

1 Արարչապետական ած՟ երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ.

կալ ․ մեծուն՟ ահեղ ․ գթուն՟ օրհ-
նաբանելի ․ ողորմուն՟ խոստովանե-
լի ․ բարերարութ՟ երկրպագելի ․
խնամակալուն՟ պաշտելի ․ մարդա-
սիրութ՟ տօնելի ․ պահպանութ՟
խնկելի ․ բարձրեալ անքննին ․ մեր-
ձաւոր կամարար ․ ապաւէն անկաս
կածելի ․ մխիթար սրտից ․ փարա-
տիչ վշտաց ․ ապաքինիչ ցաւոց ․
սպառումն վհատուեց ․ բարձումն
պարտեաց ․ փոխարկիչ կարեաց ․
կարգաւորիչ կրից ․ յարմարիչ բա-
նից ․ սանձարկու լեզուի ․ շրջադ-
րութ՟ շնչոյ ․ կացուցիչ հաւատի ․
ամփոփիչ խորհրդոց ․ կրթարան
կամաց ․ արձանացուցիչ յուզմանց ․
հանդարտութ՟ մրրկաց ․ խաղա-
ղութ՟ ծփանաց, որ ունիս զթևոց
ամենընթաց իշխանականիս ; և ի-
մաստութ՟ նուաճեալ առ քեզ
դարձուցանես ։

2 Գոհաբանեալ միշտ երախտա-
ւոր, որ հեզութբ անհպարտու-
թե երկայնամտեալ համբերիս անեն-
չանօք անճառ հրաշիւք՝ յանձինս
սրբոց. Թագաւոր էից համայնից,
տէրն ծանուցեալ գթած. սկզբնա-
հայր և նախաշաւիղ սիրոյն ընթա-
ցից. Ճանապարհ կենաց, որ առաջ-
նորդես քաղցրութբ՝ դիմելոյս ՚ի
լոյսդ վերին: Ձեռնկալու մեծ-
վստահութե, որ ոչ թողացուցանես
գայթագղելոյս ՚ի վայր կործանել.
յուսոյ կերպարան, ճշմարիտ առ-
հաւատչեիւ աղաչողաց մնասանց
յայտնի երևեալ. ապաւինութն հան
գստեան, որ ոչ երբէք մատնես
վտանգի դատապարտութե: Զգա-
ստութի շնորհաձիր, որ տաս ըմբռ-
ռելես առանց փոխատրութե մերկա-
նաց. առատութի աննախանձելի,
որ քոյին փառաւորութբ՝ զանարգ-
նիւթ

նիւթ հոգւոյս ճոխացուցանես ։
Պայծառութի̅ անստուեր, որ ճա-
ռագայթիւք ահեղ բարձրութե̅
պարածածկեալ զթշուառս՝ կրկին
բարգաւաճ առնես ։ Բուրիչ մե-
ղանաց բազմաց, որ զհերքեալս ՚ի
փրկութե̅ առաջնոյն պայծառութե̅
նորոգեալ՝ վերստին վայելչացուցա-
նես ։ Հնարաւոր դիւրահաս առ-
ամ̅ր անբաւ գերամբարձուի̅ յաւէտ
յառաջեալ․ եւք վստահութե̅ առ
խոստացելոցն վայելս․ երանութի̅
անձկալի, յոր զկենդանուի̅ շնչոյս
լքանելն է ախորժելի, զի զքեզ
գտից կենդանի ։ Կամք անփոխադ-
րելի՝ առ ՚ի քաւուի̅ գերոյս զօրա-
ցեալ ամենագովելի․ անսխալելի
դեղ կենաց, որ եւ մեռելոց՝ բնա-
ւին եղծելոց առնես զաքանչելիս ։
Ամենաստեղծ աներկբայելի, որ
զհուրբ կիզեալն, եւ զհողմով հօս-
եալն

եալն, և ըժ-անեօք գաղանաց ծախ-
եալն, ՚ի քթթել ական նովին հիւ-
թականութ̃ե անպակաս յարուցա-
նես։ Ընհաւասար համարձակու-
թ̃ի, յորում մ̃ծօրէն պանծանօք
պարծելն է իրաւացի։
3 Նայեա՛ց տէ՛ր յերկնից զուարթ
քաղցրութ̃ե՝ յամենակործան
վտանգ նեղելոյս, և արա՛ անդորր
հանգստական դիւրաւոր՝ ՚ի բազմա
տագնապս հեծութ̃է։ Եւ զլարու-
ցեալ գումարս սատակչացն, եթէ
սպառազէնք այսական դժնեայ հր̃
նարաւորութ̃ե բուռն մարտակցաց
պատկանեալ զինուք, եթէ մեղաց
տղեղ՝ և քո ատելի կերպարանք,
եթէ ցաւոց և ախտից վտանգիչ և
կորստական նշմարանք մերժեսցե՛ս
հանցե՛ս հատցե՛ս խափանեսցես և
հալածեսցե՛ս՝ հեռի սահմանաւ իս-
պառ. տարագրեալ անդարձ որոշ-
մամբ.

մամբ վերստին կորստեանն․ և կա-
ռուսցես կացուսցես նպատակ կե-
նաց և ամուր մահարձան՝ զնշան
խաչիդ՝ ապաւինելոյս ՚ի քեզ՝ փըր-
կութի․ Դու յայսմ անպարտ և ան-
պարտելի և անվանելի արուեստից ա-
հաւորիդ մեծուե, լուծցին որո-
գայթքն գաղտնածածուկ սատա-
նայականք․ կապտեսցին մեքենայ-
քըն․ վատնեսցին գայթակղութիքն․
խայտառակեսցին հաղբիցն դրու-
թիք․ յայտնեսցին երկայթք որոգյն․
գտցին նենգողին ծուղակք․ վե-
րասցին վարմին վերարկուք․ տոչո-
րեսցին որոմանցն բոյսք․ նզովես-
ցին բռնաւորին չարաբանութիք․
կորեսցի լար խաբէութե ՚ի մահ որ-
սողին․ պարսեսցին պատրողին բան
սարկութիք․ պակասեսցին զէնք զըր
պարտողին․ անկցին սուսերք մա-
հաբերին․ սուզեսցին սադրողին

 պատ

պատրաստութիւնք · արձակեսցին տո-
ռունք տագնապողին ։ Այլայլեւ-
ցին սուտ կերպարանք կեղծաւո-
րին · սատակեսցին խորամանկացն
խիստ յարձակմունք · ցրուեսցին
կցորդութիւնք կերչացն · բաժանեսցին
ավէնք աւազակացն · քայքայեսցին
բոյլք բարբարոսացն · քանդեսցին
ամրոցք ապստամբողացն · արգել-
ցին ամպրոպք յանդգնելոցն · փա-
րատեսցին փորձողին անձրևք · հա-
լեսցի և ցամաքեսցի եղեամն աղան-
դաւորին ։ Խորտակեսցի եղջիւր
գոռոզին · մանրեսցին ամբառնալիք
դրօշիցն կերպարանաց · փշրեսցին
ամբարհաւանութիւնք հպարտացելոցն ·
նահանջեսցին դիմեցմունք ճակա-
տելոցն · քակտեսցին միաբանութիւնք
զօրացն բելիարայ , թէ անմարմինք
և եթէ մարմնաւորք , փախիցեն
ընդ նոյն ճանապարհ ’ի մի շաւղոց
հե

հետոյ՝ յեօթն տարակոյս, ՚ի գուբն
ինձ փորեալ՝ ինքեանք ընկձեցին։
Յեղանակեցին ձմերունք ձանձ-
րացուցչին․ հատոյի կայն կցորդու-
թէ՝ մշտաջան աւազակին․ նողկա-
ցի մնացս կայից՝ համբոյր շողքոր-
թին․ ընդ միջեալ մեկնեցին՝ նե-
տաձգութիւք նեղչին․ կայցէ ՚ի սա-
սանման՝ նաւ խաղախողին․ խլես-
ցին յարմոտոց անտի՝ տատամունք
խածանողին։

4 Մ̅ի փայտից օրհնութե̅ կենաց՝
յորում՝ պրկեցար ա̅ծդ ա-
նըմբռնելի․ յիշատակաւ բևե-
ռացդ, որով ՚ի գործի մահու մա-
ծուցար՝ արարիչդ երկնի և երկրի․
արեամբդ տէրունականաւ, որով
զմիշտայն մեծ կարթիւ ածեալ որ-
սացար․ լեղւոյն դառնութ̅ե, զոր
արբեալ՝ զդեղատուութ̅ի կորուսչին
արտաքս հեղեր․ պատմուճանութ̅ե

բղձական Ճառիւք կրկին սորա-
փելեաց, որով զլրբուն հակառա-
կողին ըմբերանեալ ամաչեցուցեր։
անուամբդ անհասականաւ Տեառ
անթարգմանելւոյդ, յորմէ դողան
և դատապարտին սոսկացեալ սատա-
նիկ սարսափմամբ՝ բնութիւք ամ
երևութից և աներևութից, եղիցին
այս ամ պարգևք շնորհաց՝ խոստո-
վանելոյս ՚ի պաշտպանութի, ՚ի բժշ-
կութի և ՚ի քաւութի։ Եւ մահաբեր
դառնաթոյն օձին, և որ ՚ի նմա ապ-
դեաց տխեղծերատաւ չարութին, ՚ի
սատակումն եղիցի նորին. Նոյն
ինքն ՚ի կորուստ և յանբժշկական
հարուած տանջանացն՝ առաւել մատ-
նեսցի, կապեսցի և ըմբռնեսցի։
Եղիցի ողորմութ ստեղծողիդ ընդ
իս, և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ
անբաժանօրէն կապեալ միացեալ
՚ի մի։


Եւ

Տ Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս
ձայնի՝ մաղթանաց գոչման՝ ա-
ղօթից հայցման, ծերոց և տղայոց,
կուսի և երիտասարդի, և եթէ յա-
ղախնաց ոք պաղատեսցի ա՟ծսիրա-
բար, հաւասարապէս անաչառու՟բ
ընկալցին 'ի քէն մասն երանու՟ե՝
պարտուց ազատու՟ե, հաստեալ
վերստին յանարատու՟ի նորոգ մաք-
րու՟ե, նկարեալ դարձեալ զքոյդ
կերպարան անփոփոխելի։ Ահա տի-
րապէս՝ հընարաւոր զօրեղ անպա-
տում անհաս անիմանալի, տեսցես
սաստանօր 'ի հառաչանս կողկողա-
նաց այսր հեծու՟ե, որ 'ի բոլորից
շրթանց ընծայեալ քեզ մատուցա-
նի, վ՟ն հօր քոյ երկնաւորի և բա-
րերարի, և հոգւոյդ ս՟բյ փառակցի
և կենդանատուի․ ա՟ծածնիդ բա-
րեխօսու՟բ, և խնդրուածովք ա՟մ
ս՟բց։ Որ դու ստեղծեր զա՟մ. և

 'ի

՚ի քէն եղեն ամենայնք . և դու տի-
րես ա՟մի . և քեզ փառք յա՟մցունց՝
միդ յիսկուէ անժամանակ երրոր-
դութեդ , զուգակցապէս փառա-
ւորեալ յանբաւս , և յաւիտենից
յաւիտեանս , ամէն ։

---

՚Ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ : ՂԱ

1 Տէ՛ր ա՟ր գթութեց և ա՟ծ ողոր-
մութեց . անուն մեծութե .
ձայն ահաւորութե . կոչումն սասա-
կութե . լուր անհասութե . բարբառ
դողութե . հնչումն հիացման . յու-
սադրութի բարերարութե ամենողորմ
քաղցրութե , ՚՚Հօրմէ երկուցեալ
սասանին ա՟մ բնութիք եղելոց . ՚ի քո
սպառնալեաց ահիդ պակուցման՝
սասանին սերոբէք . ամփոփին
քերոբէք . պարուրին պարք լուսա-
կերպիցն . երկնչին հիացմանբ բոլոր
պե

պետութիւնք վերնոցն · նոյնք ցնծան
դողութեամբ մեծաւ ՚ի մի նուաւակտոխս
բերկրութեամբ · զարհուրին դեւք · ըն-
կրկին չարութեցն գունդք · պակա-
սին խաւարասիրացն հոգիք · անդն-
դոց մատնին հրեշտակք օտարին :
Կապին նշանաւ խաչին՝ յարձակ-
մունք դիմամարտին · փակին ՚ի ստո-
րին բանտի՝ քինաւոր ամայեկա-
ցիքն · անխզելի հանդուցիւք պա-
շարին՝ խումբք հակառակորդին ·
արգելցին անզերծ զնդանաւ՝ մա-
հազինացն կայծակաւք · այնդին ՚ի մե-
տաղս ահեղ հրամանիդ՝ այսակա-
նացն գումարք · պապանձին կար-
կեալ՝ ընդդիմաբանիցն դասակցու-
թիւնք · պարտաւանդին հիւծմամբ
կորստեն՝ աներեւութիցն ժողովք ·
անլոյծ շղթայիւք ներքին՝ տաւաքե-
լութիւնք դերաքրիստոսին :

2 Ահա կարկառեմ մատամբք ձե-

 ռինս՝

ւինս՝ զտէառնագրութիւն նշանիդ
՚ի ժամ գիշերիս, որ ոչ մթանաս
խաւարաւ անգիտութեան՝ ամենեւին.
տեսականութիւն, քան թէ ՚ի լոյս
անմատոյց հանգուցեալ բնակես:
Ընկալ զաղաչօղս փառանգաւոր գո-
հաբանն՝ ընդ պահպանութեամբ թեւոց
հզօրիդ. փրկեա՛ ՚ի ցնորից՝ եկամուտ
պղտորութեանց. Ո՛ր առա զզգայարան
հայելեաց՝ սրտիս նկատմանց. ամ-
բացո՛ փայտիւդ կենաց՝ ՚ի տխրական
անրջոց. արեամբ քո սրսկեա՝ զշէն
ջարկութեան կայիցս. զհետս երումն
տիցն՝ կաթուածով կենարար կողիդ
գծագրեա՛. երդուոցն պահպանարան՝
քառակերպիդ ձեւակերպութեան եղի-
ցի. հանդէպ տեսութեան ոչացս ամ-
բարձման՝ փրկականդ քո կրից խոր-
հուրդ առդիցի. ընդ բարաւոր
յարկիս՝ չարչարանաց քոց գործի
հաստիցի. զծառայդ օրհնութեան՝
հա

հաւատք յուսոյ իմոյ կախեսցի ։
Արգե՛լ տէ՛ր՝ սովաւ զաստուածեղէն
հոգւոյ · միջոցէ՛ անխափան՝ պաշտ-
պանին լուսոյ · և ընդ սատանիկ ծան-
րութեան ցաւոցս՝ և զբերան պար-
տեացս թեթևացո՛, զոր ՚ի լուսաւորն
միոյս ամփոփման մահձնոցս անկող
նի՝ ուշաբերեալ զյուսահատու-
թեանցն զսուն պարզոցն՝ խոստովա-
նիմ ամենադիտիդ զանհամար մա-
սունս գործոց չարաչար անօրէ-
նութեանցս ։

3 անգի՛ն զխաստակեալս ՚ի բազմա
ծուփս աշխատութե՛ · բարձ
զտագնապ տարակուսանաց ոգւոյս
կործանմանն, զդառնութիւնն ընդ
վշտացն · զհեծութիւն ընդ կարեացն ·
զանձկութիւն ընդ թշուառութեցն ·
զհառաչմունսն ընդ խորտակմանցն ·
զբեկութիւնսն ընդ ափշութեցն ·
զթմբրութիւն ընդ շրտմանցն · զար-


բե

բեցուլին ընդ յիմարութեցն · զԹե-
րամտութին ընդ խելագարութեցն ·
զասաուումն միրոյն , և զհրայլին ջեր-
մութի աղուական ախտին ։ ( )ժամ
դամկ լեր ակարութե բազմախուրա
տարրատմութե , բարեգործ աջովդ-
ջնորհի · ձեռամբդ նորոգողի · մա-
տամբդ կենսաբաշխի · փառօքդ
մշտափայլի · յարակայութեդ անեղ-
ծի · երեսօքդ զուարթականի · խա-
կութե եւդ պաշտելի · բարձրութեդ
երկրպագելի ։ ատո զչարաչար
հեծութի՝ կորստականս խեղդման,
զնոր գիւտ չարին · զհին խարդա-
խութիւն բանսարկուին · զօտար
ադդեցմունս՝ ՚ի մահ կրթողին · զան-
յարմարական երևոյթս՝ հանապա-
զորդեան եղեռնագործին · զատ
աչս հնարագիտին դժնդակ դի-
ւին · զորոգական բոցաշնչութի ձգօղ
կախարդին ։ Պահեա ՚ի տեղւոջ
հան

հանգստեան մեռօրինակ այսր դա-
դարման , յաներևոյթ մտածուեց ·
՚ի մասնաւոր սխալուեց · ՚ի մեծա-
գոյն գայթագղութեց · ՚ի փոքրա-
գոյն ոտնատութեց · ՚ի խաբեբայ
չար ձանձրութեց ։ Զեռայն՛ զան-
հանդերձ մտածութի ՚ի զգայուեց
ծառայիս յանցաւորի , զեկիս բառա-
րեկիս · զխալիս թշնամանելիս · ըզ
գիջուածս պատկառելիս · զհեռա
վրիպելիս · զպատրիս ձաղելիս · ըզ
խորհուրդս անդոսնելիս · զաւելա
բանութիս նշկահելիս ։ Անխաւ
հոգւով և անշապաղախ մարմնով զա-
պաւինեալս ՚ի .քեզ հանդերձեալ ,
՚ի շնչմանէ հողմոյ · ՚ի զարկմանէ
բռնութեց · ՚ի բախմանէ փոթոր-
կաց · ՚ի յոստմանէ մրրկաց · ՚ի յար-
ձակմանէ գաղանաց ։ ՚Ի կափման
աչացս՝ հայեցուած սրբոյն մի՛
տուեբասցի , այլ՝ զուարթասցի՛

պայծառացի՛ վայելչացի՛ ընդ քեզ
փայլեսցի՝ տէ՛ր յ՟ս ք՟ս , լուսաւոր
վառմամբ անշիջանելեաւ ։ Խանձու-
քո սրբեա՛ զպատապարանս բաղ-
մանկանս , ՚ի խորամանկութեց · ՚ի
զբաղմանց · ՚ի քո ատելն յիշատա-
կաց · ՚ի վերնամարտ մտածմանց · ՚ի
քրէական մոքոսութեց · ՚ի տխրա-
նենգ անշնորհութեանց · յաստ-
ուածընդդէմ հերձուածութեց ։
Պնդիւք վերնայնոցդ՝ վերակացու-
թեան լիցիս , պետութբք · իշխանու-
թեամբք · զօրաւորօքն անյաղթա-
կանաց՝ մաքուր մատակարարաց՝ աս-
տծութեդ · աւագեալքն՝ աւետա-
եաց աւետարանաւն · մարգարէքն՝
կանխակարանօքն · մաղթանք երջան-
կացն՝ ՚ի կատարածի աւուրն ըն-
ծայեալ ։ Սրովք նիրհեցից երկիւ-
ղիւ ըստ քեզ՝ տրամութբ , և զար-
թեայց շնորհօք քո՝ կրկին ուրա-

խութբ՟ · եթէ վհատութբ՟ նեղեցից, յարեայց դարձեալ հոգեւորականս բերկրութբ՟ · եթէ ընկղմեցայց մե-ղանօք, կանգնեցայց վերստին զա-տեալ 'ի խղճէ անաղտ ամբրծութբ՟ ։

4 Ուր խնդրուածոց ամենահա-ուաչ ձայնիս հեծութե՟՝ միայն բազմագութ, բարեխօսութբ՟ ս՟բյ ա՟ծածնիդ, եւ ա՟մ արդարոց, եւ նահատակաց ընտրելոց ։ Նու քեզ փառք յա՟մցունց՝ իմովս գոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթ-նոցն անմահականաց դասուց՝ 'ի գո-վեստ հօր քոյ ո՟յ մերոյ, եւ հոգւոյդ ս՟բյ բնաւորից հաստողի եւ նորոգողի յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

---

'Ի խորոց սրտից խօսք ընդ ա՟յ ։ ԼԵ

1 Որդեգանին արդար · Ճառագայթ օրհնեալ · լուսոյ կերպարան ·

փափաք անձկութե · բարձրեալ ան-
քննին · զօրեղ անպատում · բար-
ւոյ բերկրութի · յուսոյ տեսուի ·
գովեալ երկնաւոր · թագաւոր փա-
ռաց · քս արարիչ · խոստովանեալ
կեանք ։ Եւ արդ՝ զթերութի վրիպա-
նաց բազմաբղխեալ ձայնի եղկելոյս՝
ամենազօրդ բանիւ լցեալ մատու-
ցես յաղերս հաճութե հօր քում
բարձրելոյ ։ Որ վասն իմ 'ի փորձ
եկիր անիծից , կերպարանեալ զիմ
նմանութի՝ ամենեւին կենաց օրհ-
նութի , վերնոց և ներքնոց բարե-
խնամօղ տեսուչ համայնից ։ Ո՛ է
թէ յանձն առեր մեռանիլ վս իմ
մծ և մրդ բոլորեցուն , որչափ հա-
ճեցիս առաւել և այժմ վտանգա-
ւորս կրից կարեկցել , ընդ իմ պար-
տաւորիս միշտ աղօթելով աղաչակ-
ցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ
համապատիւդ քո հայր ։

 Եւ

2 Եւ վն՟ արեանդ պատուականի
միշտ մատուցելոյ ՚ի հաճութ՟ի
կամաց առաքչիդ՝ բարձցին վտան-
գըք մեղուցելոյ դատապարտելոյս·
Թողցին պարտիքն · ապաքինեսցի
ամօթն · մոռասցին պատկառանքն ·
բարեգործեսցին դատակնիքն · սա-
տակեսցին որդունքն · վերասցի լալն ·
հանդարտեսցէ կրճումն ատաման-
ցըն · սպառեսցին ողբքն · հատցին
արտասուքն · մերժեսցի սուգն ·
հալածեսցի խաւարն · վատնեսցի
հուրն սաստկութեան · հերքեսցին
տանջանարանքն բազմօրինակք ·
3 Եկեսցեն գթութիւնք կամողիդ
և պարգևողիդ կենաց ամենից·
Ծագեսցի լոյսդ · արագեսցէ փր-
կութ՟իդ · հասցէ օգնու՟իդ · ժամա-
նեսցէ այցելութիւնդ · կանխեսցէ
ցօղդ ողորմու՟ե , յառաջեսցէ ար-
բուսցէ զանդաստանս պաքեալ՝


ան

անկեալ ոսկերացս թշուառութե՟ ՚ի վիհն մահու. ծաղկեցուսցէ՛ պտղաբերեսցէ՛ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութե՟ հոգւոց ննջեցելոց:

Ո՛վ ի տ՟միւ մահացե՟լ հոգիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո՝ գթած, ՚ի քեզ զօրացե՟լ քեւ նորոգեցայց, զատեալ ՚ի մեղաց անմահ կենդանութե՟ ՚ի յարութե՟ն արդարոց, հօր քում օրհնեցեալ: Ը՟նդ որում քեզ փառք, և հոգւոյդ ս՟բյ բարեբանութե՟՝ վայելչական գոհութե՟, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:



Պատ

## Պատմութ͞ի վարուց սրբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսին ։

Կիպրիանոս էր այր մեծազգի ազնուական և մեծատուն յոյժ, ուսեալ էր և զա͞մ հանճարս իմաստութե͞, և հմուտ լեալ մոգուե͞ն՝ որով ա͞մ աղանդոց գիտուն էր ։ Եւ կոյս աղջիկ ոմն էր ՚ի մեծ քաղաքին անտիոքայ՝ անուն յուստիանեա, քրիստոնեայ կրօնիւք՝ դուստրր եդեսիոսի քրմի կռոց, ուսե͞լ զհաւատն ՚ի պրելիոսէ սարկաւագէ, և դարձոյց զծնօղսն իւր յա͞ծգիտութ͞ի, և մկրտեցան յոփտատոսէ եպիսկոպոսէ ։

Իսկ հեթանոս ոմն ագղիդոս անուն սիրեաց յոյժ զյուստիանեա, և կամէր առնուլ զնա ՚ի կնութե͞ . և ջանացեալ բազում պատգամաւորօք և խոստմամբք՝ և ոչ կարաց հա-

ւանեցուցանել։ Ողեաց առ նա
յուսախանեա և ասէ, եթէ ես քի̅
եմ հարսնացեալ, և մարդոյ երկրա-
ւորի ոչ ամուսնանամ։

Նա պատահեալ նմա ՚ի ճանապար-
հին բուռն հարեալ զնմանէ՝ ոչ
կարաց ըմբռնել, այլ մանաւանդ-
անարգանօք և ամօթալից դարձոյց
՚ի տուն իւր։ Նա երթեալ առ կիպ-
րիանոս մոգ, և խոստացաւ տալ
նմա երկուս տաղանդս ոսկւոյ և
արծաթոյ՝ եթէ մոգութ̅ ն̅ր առցէ
զյուսախանեա կին։

Նա կոչեաց կիպրիանոս ՚ի գիշերին
յայնմիկ դև մի և արձակեաց առ
յուսախանեա. և երթեալ դևն ե-
գիտ զերանելին կոյսն զի աղօթէր
զերրորդ ժամու գիշերոյն։ Նա գի-
տացեալ զգալուստ դևին արար
ընդդէմ նորա զնշան խաչին և
փախեաց ՚ի նմա. և դևն երկիւղիւ
մե

մեծաւ փախստականն եղեալ գնաց
առ կիպրիանոս ։
Իսկ նա առաքեաց այլ դև, և նոյն-
պէս և զնա նշանաւ խաչին հալած-
եաց ։ Իսկ առաքեաց երրորդ անգամ
այլ դև ․ և այնպէս դարձաւ երկիւ-
ղալից ոպ̃ ՚ի հրոյ փախուցեալ ․
Իսկ կիպրիանոս խոշտանգեաց ըզ-
դևն՝ և սաստելով նմա հարցանէր,
եթէ էր՞ վ̃ն փախեան և ոչ կատա-
րեցին զհրամայեալսն ։ Իսկ նոքա
ասեն, նշան խաչելոյն յի̃ ոչ միայն
զմեզ հալածէ, այլ եթէ և իշխանն
մեր ինքնին գնասցէ ա̃մ աներևոյթ
զօրօք իւրովք՝ ամօթալից փախստա
կան լինի ՚ի նմանէ ։
Իսկ լուեալ կիպրիանոս անէծ ըզ
դևսն, և հալածեալ զնո̃ յինքենէ՝
հաւատաց ՚ի ք̃ս ․ և առեալ զա̃մ
գիրս մոգութեան և կախարդանաց
հրով այրեաց ։ Իսկ երթեալ առ
ո̃քն

ոքն Անթիմոս եպիսկոպոսն՝ և պատ-
մեաց խոստովանութեամբ զամ զոր ինչ
գործեաց մոգութեամբն ։

Նոյն ՚ի մեծի շաբաթուն մկրտեցաւ յեկեղեցւոջն, և յութերորդ աւուրն եղև ընթերցող, և ՚ի քսան և հինգ՝օրն եղև կիսասարկաւագ, և յետ յիսուն աւուր եղև սարկաւագ ։ Նոյն յետ տարւոյ միոյ ձեռնադրեցաւ քահանայ, և զվեշտասան ամ արժանապէս կատարեաց զկարգ քահանայութեանն ։

Նոյն յորժամ հանգեաւ եպիսկոպոսն ՚ի ք̃ղքն՝ նստուցին զնա հաւատացելքն յաթոռ եպիսկոպոսութե̃ն ։ Նոյն ձեռնադրեաց զյուստիանեա սարկաւագուհի, և անուանեաց զնա յուստինեա ։ և ուսուցանէր և լուսաւորէր զամենեան՝ զհեռաւորս հրովարտակօք, և զմերձաւորս վարդապետութե̃բ ։

## Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց աղանդաւորաց :

Թագաւոր հզօր ապաւէն ծառայելոց՝ փրկիչ նեղելոց՝ որ վն̃ մեր խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի ս̃րբ կուսէն մարիամայ · վասն մերոյ փրկութե̃ մատնեցար, ըմբռնեցար, չարչարեցար, խաչեցար, թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համբարձար փառօք առ հայր: Զարթո՛ զզօրութի̃ քո և էկ 'ի կեցուցանել զգինս արեան քոյ տէր · և մի՛ տար գերել սատանայի զ.քո փրկեալքս, և մի՛ տար բնակութի̃ չարին՝ զտաճար անուանդ քում սրբոյ · այլ գթա՛ 'ի քո արարածս արարչական սիրով քո, և ողորմեա՛ մեզ, զի 'ի խաչ քո պարծելով պարծեցաք · և փրկեա՛

զմեզ յանէրևոյթ չար դժնդակ
դիւաց, և՚ի խաբեբայ եղեռնական
գործոց կախարդաց. և քեզ փառք
յաւիտեանս, ամէն:

Զոր իշխանքն հալածին, որք ընդ
ծառայս քո մարտնչին. երևելով
նշան խաչին, աներևոյթքն կոր-
ծանեսցին:

## Մէ աւետարանն՝ որ ըստ Մատթէոսի

Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն
յս̅, զհետ եղեն նր̅ կոյրք եր-
կու, աղաղակէին՝ և ասէին. ողոր-
մեա՛ց մեզ որդի՛ դաւթի: Իբ-
րև եկն ՚ի տունն, մատեան առ նա
կոյրքն. և ասէ ցնոսա յս̅. հաւա-
տա՞յք՝ եթէ կարող եմ առնել ձեզ
զայդ. ասեն ցնա՝ այո՛ տր̅: Յայն-
ժամ մերձեցաւ յաչս նց̅՝ և ասէ.
ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ.



Եւ

Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա յս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ընդայն։ Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասէն. Թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլ, Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդևս։

—

## ՄԲ Աւետարան՝ որ ըստ Մարկոսի։

Եւ ել լուր նորա ընդ ամ կողմն գալիլեացւոց։ Եւ վաղվաղակի ելեալ 'ի ժողովրդենէն, եկն 'ի տուն սիմոնի և անդրէայ՝ յակոբաւ և յովհաննու հանդերձ։ Եւ զո-



քանչ

քանզի սիմոնի դնէր ջերմացեալ, և
վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։
Եւ մատուցեալ յարոյց զնա՝ կալ-
եալ զձեռանէ նորա. և եթող զնա
տենդն՝ և պաշտէր զն̃ս։ Եւ իբրև
երեկոյ եղև՝ ՚ի մտանել արեգականն,
բերէին առ նա զա̃մ հիւանդս և
զդիւահարս. և էր ա̃մ քաղաքն
ժողովեալ առ դրունսն։ Եւ բժ-
շկեաց բազում հիւանդս ՚ի պէս
պէս ախտից, և դևս բազումս ե-
հան. և ոչ տայր խօսել դիւացն,
զի գիտէին զնա թէ ք̃ն է։

---

## ԱԷ Աւետարան՝ որ ըստ Ղուկասու։

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այ-
նոսիկ ել ՚ի լեառն կալ յա-
ղօթս, և հանէր զգիշերն ՚ի գլուխ
յաղօթսն ա̃յ։ Եւ իբրև այգ եղև՝
կոչեաց զաշակերտսն իւր, և ընտ-


րեաց

քեաց ՚ի նցնէ երկոտասանս․ զորս և
առաքեալս անուանեաց։ Զսիմովն՝
զոր և պետրոս անուանեաց, և
զանդրէաս զեղբայր նորին, և զյա-
կովբոս և զյովհաննէս, և զփիլիպ-
պոս և զբարթուղիմէոս․ և ըզ
մատթէոս և զթովմաս, և զյակով-
բոս ալփեայ, և զսիմովն զկոչեցեալն
նախանձայոյզ․ և զյուդայ յա-
կովբեայ, և զյուդա իսկարիովտա-
ցի՝ որ եղև իսկ մատնիչ։ Եւ իջեալ
նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափա-
րակ․ և ժողով աշակերտացն նր՝ և
բազմուԹի յոյժ ժողովրդեանն, յամ
հրէաստանէ և յերուսաղեմէ՝ և
յայնմ կողմանէ՝ և ՚ի ծովեզերէն
տիւրոսի և սիդոնի․ որ եկին լը-
սել ՚ի նմանէ՝ և բժշկել ՚ի հիւան-
դութենէ իւրեանց․ և նեղեալքն
յայսոց պղծոց բժշկէին։ Եւ ամ
ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի

Նա, զի զօրութի բազում ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։

---

## ՄԵ Եւեփփաթան՝ որ բաց Յօհաննու։

Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Յս յէմ։ Եւ էր յէմ ՚ի պրոբատիկէ աւազանին. որ կոչէր եբրայեցերէն բեթհեզդա, հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութի յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ տն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ՚ի շարժումն ջրոյն իջանէր, բժշկէր՝ ոչ ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր ՚ի հիւանդութե իւրում։ Զնա իբրև ետես Յս՝ զի անկեալ դնէր, և գի-

 տաց

տայ եթէ բազում ժամանակք են այնուհետև, ասէ ցնա. կամիս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն. տէր՝ ոչ զոք ունիմ, թէ յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա յս. արի առ ըզ մահիճս քո՝ և գնա: Նոյն ողջացաւ այրն, և յարեաւ՝ առ զմահիճս իւր՝ և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ:

---

## ՎԱԽՃԱՆ ՀՈԳԵԽՈՐ ՊԱՐՏԻՁԻ:

30
94/1/16